


11838





4-95



Ա. ԿՐԺԻՎԻՑԿԻՑ

Հրատարակութիւն Ն. Մատինեանի

Ի՞նՉՊԵՍ ԵՆ ԾՆՈՒՆԴ ԱՌՆՈՒՄ

# ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Թարգմ. ռուսերէնից



1906

Էլեմենտար տպարտ «ՀԵՐՄԱՆ» բնկե.,  
Վաղարշաբ փողոց (161).  
[Թիֆլիս]

24.05.2013

11838

161-4P

301 4-95 48

## Հրատարակութիւն Ն. Մատինեանի

25 SEP 2006

1 DEC 2009

219

## Ի՞նչորը Ես ԹևոիՆԴ ԱՌԵՎԻՄ

# ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

toc



1906

Էկեմառնաւութեան «ՀԵՐԱԿՈ» բնկեր,  
Մադարեան փողոց (161).  
**Թիֆլիս**

Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԾՆՈՒՆԴ ԱԹՆՈՒՄ  
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

I

Ի՞նչ գործօնների ազդեցութեան տակ են երևան գալիս հասարակութեան մէջ նոր գաղափարները և որպիսի պայմաններում են նրանք մարմանում հաստատութիւնների մէջ ու իրականանում։

Այս հարցին պատասխանելու համար մենք կանգ կ'առնենք 1832 թւին Անգլիայում տեղի ունեցած ընտրողական իրաւունքի բեֆորմի վրայ. մի բեֆորմի, որ ոչչացրեց «փտած վայրերի» («ՀԱԿԱԿԱՆ ՄԵՏԵՎԿԻ»—ամայացած կոմսութիւններ) արտօնութիւնները և վերջնական հարուած հասցրեց հողային արիստոկրատիայի գերիշխանութեանը համայնքների պալատում։

Մանչեստերը, Բերմինգհամը և մեր գարի առաջին քառորդի՝ անգլիական միւս առևտրա-արդիւնաբերական կենդրունները չկային որանից երկու հարիւր տարի առաջ, եզաներն էլ մի-մի աննշան գիւղեր էին. Մանչեստերը, օբինակ, 1750 թւին ընդամենը 19 բնակիչ ունէր. Այդ տեղերի զարգացումը կատարւում էր տարերաբար. շնորհիւ զուտ անձնական նախաձեռնութեան, առանց որ և է հասարակական նպատակի հետապնդելու, մէկը գործարան է հիմում կամ առևտուր է սկսում, միւսը տուն է շինում, միշնորդութեամբ է պարապում և այլն. Աճող քաղաքը շարունակ նոր ու նոր բնակիչներ է գրասում, որոնք գալիս են գործ գտնելու և շահւելու, և ամեն մի եկուոր նպաստում է նրա յետազայ հարստութեան ու մեծութեան աճելուն. Երկրում գոյանում են նոր, հարուստ ու եռունիկենդրոններ. Այն ինչ հին մեծու վորք քաղաքները, որ մի ժամանակ ազդեցիկ ու հարուստ էին, աղքատանում են հէնց միենոյն գործօնի ազդեցութեան տակ, այն է՝ մասնաւոր շահերի տարերային ճաշման տակ։ Փոփոխութիւնը կատարւում է փոքր առ փոքր ամրող երկրում. շինուում են նոր ճանապարհներ Բնակելութիւնների ու բնակիչների, հարստութեան ու արդիւնա-

Дозволено цензурою. Тифлисъ, 14 апреля 1906 г.

բերութեան տեղափոխութիւնը, այսինքն՝ այն ամենի տեղափոխութիւնը, որոնց մենք «արդիւնագործուկան ոյթեր» կանուանենք—բոլորովին այլ կերպարանք է ընդունում, և հասարակական կեանքի ծանրութեան կենդրոնը տեղափոխում է ուրիշ տեղ: Այդ գարգացումը առաջ է գնում տարերաբար, մեքենայօրէն, —այն մտքով՝ որ գործող սերունդները չեն մտածում այն հետեանքների մասին, որ պէտք է ունենայ իրանց գործունէութիւնը հասարակութեան, համար. հետեանքների, որոնք անշուշտ երևան կը գտն, չնորհիւ կացութեան նիւթական պայմանների ու որոշ բարձրութեան հասած արդիւնագործական ոյժերի նոր զասաւորութեան: Մարդկանց արարքը չի գեկավարում որ և է հասարակական ձգտումով: Միմիայն մասնաւոր շահն ու մասնաւոր գիտակցութիւնը, որ ուղղուած են վաստակն աւելացնելու վրայ, միմիայն դրանք են կազմում նրանց գործողութիւնների միակ շարժիչը:

Այդպիսի գործօնների ազգեցութեան տակ ժամանակի ընթացքում Անգլիան բոլորովին կերպարանափոխուեց: Դեռ ՀՅI և Նոյնիսկ ՀՅII դարերում երկիրը հաւասարաշափ էր ընակուած: Այն ժամանակ թէկ կային քաղաքներ, սակայն նրանք, բացի Լոնդոնից, մանր էին: ՀՅIII-րդ դարը բաժանում է Անգլիան արդիւնագործական ու գիտական շրջանների և մեծ քաղաքների սկիզբն է գնում: Իրեւ ծագած փոփոխութիւնների հետեանք՝ Անգլիայի հասարակական կեանքում առաջ է գալիս աններդաշնակութիւնը: Սօցիալական կացութեան իրային պայմանների մէջ տեղի ունեցած դուտ նիւթական փոփոխութիւնները նոր պահանջներ ու նոր ձըգտումներ են առաջ բերում: Կանգ չառնենք այդ բոլորի վրայ, ուրովինետև այն ժամանակ մենք ստիպուած կը լինէինք մի շատ մեծ պատկեր տալու. բաւականանանք միայն ընտրողական իրաւունքի բեփորմով: Անգլիայի քաղաքական կազմը յենուում է ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքի վրայ, սակայն Մանչեստրը և միւս մեծ, առեւտրական և արդիւնաբերական քաղաքները իրենց ներկայացուցիչներին չէին ուղարկում պարլամենտ, իսկ ամենաւաւառ գէպում ընտրողական իրաւունքից օգտուում էին շատ աննշան չափով՝ համեմատած իրանց նշանակութեան հետ: Այդ համգամանքը բացատրում է շատ պարզ կերպով: Ընտրողական կանոնադրութիւնը ծագեց այն ժամանակ, երբ Անգլիայի արդիւնագործական ոյժերը բոլորովին ուրիշ կերպ էին զասաւորուած: 1677 թուից սկսած ոչ մի փոփոխութիւն չէր եղել քաղաքների ընտրողական իրաւունքի մէջ, միենոյնը մենք տեսնուում ենք և առանձին կոմութիւնների ընտրողական իրաւունքի վերաբերմամբ: Այդ

կանոնագրութիւնը մի ժամանակ համապատասխան էր նիւթական պայմանների ժամանակակից կազմին:

Գոնէ մենք չենք նկատում, որ այն ժամանակ անհամապատասխանութիւն լինէր ազգաբնակութեան ու հարստութեան և միւս կողմից բնակիչների քաղաքական իրաւունքների դասւուընթեան միջն է Բայց հասարակութիւնը իր գոյութեան որոշ մոմենտում արտայալտելով իր պահանջները, ընտրողական կանոնադրութեան մէջ անընդհատ զարգանում, առաջ էր գնում, մինչեւ որ նրա մի քանի խմբերի և օրէնքի տառի միջն տարածայնութիւն առաջացաւ: Առեւտրի և արդիւնաբերութեան հարուստ կենդրումները յաճախ ներկայացուցիչներ չունեն պարլամենտում, այն ինչ «փտած վայրերը» օգտուում են այդ իրաւունքից, օրինակի համար, Օ՛լլ Սագեմը, որ մնդամենը հինգ խրծիթից էր բաղկացած, երկու պատգամաւոր էր ուղարկում: Մի քաղաք կար, որ ջրի տակն էր անցել, սակայն առաջակայ ափի տէրը նաւակում նստած շարունակում էր զեռ ևս ներկայացուցիչ ընտրել պարլամենտի համար:

Այդպիսի rottent boroughs-ների մեծ մասը գտնուում էր լորդերի ձեռքին, որոնք այդպիսով պարլամենտը դարձրել էին դասակարգային մի կոմիտէ: Մեծ քաղաքներում կենդրունացած արդիւնագործական նոր ոյժերը զուրկ էին օրէնսդրական գործունէութեանը մասնակցելու իրաւունքից, որ շատ կորստաբեր աղղոցութիւն ունէր արդիւնաբերական կենդրունների բարեկեցութեան վրայ.—հարկերի ծանրութիւնը ընկնում էր կապիտալիստների վրա. հացի մաքսերի գոյութեան չնորհիւ բանւուրական աշխատավարձը թէկ անունով բարձր էր, բայց էապէս ցածր էր. մանչեստերեան ձեռնաբերկունների շահերը պատշաճաւոր խրախուսանքի չէին հանդիպում պետական մարմնի կողմից:

Գոյութիւն ունեցող ընտրողական իրաւունքի և արդիւնագործական նոր ոյժերի շահերի միջն առաջ է գալիս անտաղնիզմ, որը աւելի ու աւելի սաստիկանում է, քանի զարգանում են նոր նիւթական պայմանները: Վերջապէս բանը հասնում է բացարձակ կոսւի: Մեծ քաղաքների պահանջները խիստ որոշ բովանդակութիւն ունեն, որը պայմանաւորուում է իրային յարաբերութիւնների ընութեամբ: Մանչեստերի և թերմինքնամի բնակիչները ձիգ են թափում ընտրողական իրաւունքը վերափոխել օկեանքի ոգուն» համաձայն, այսինքն պահանջնում են ոչնչացրել «փտած վայրերի» արտօնութիւնները և լայնացնել նոր առեւտրա—արդիւնաբերական կենդրունների իրաւունքները: Այդ իրողութիւնից ծագում է հա-

մապատճառան գաղափարը—ընթողական իրաւունքի բեֆօրմի գաղափարը:

Այդ գաղափարը ձևակերպում է հասարակութեան միայն մի որոշ խաւի կարիքները և արտայայտում է նոր արդիւնագործական ոյժերի պահանջները:

Թանի որ զարգացումը տահմանափակում էր միմիայն կեցութեան նիւթական պայմանների աննշան փոփոխութիւններով՝ նաև տեղի էր ունենում տարերաբար, առանց այն գիտակցութեան մասնակցութեան, որ հետամուտ է լինում հասարակական նպատակների: Զուտ անձնական մասնաւոր ձգտումներն էին մարդկանց գործունէութիւնը որոշում: Այն մարդիկ, որոնք ժամանակի ընթացքում այդպիսի յեղաշրջումն առաջ բերին նիւթական պայմանների մէջ մտքներով անգամ չէին անցկացնում, որ իրանց մասնաւոր ձգտումների շնորհիւ հասարակական կեանքում, այնպիսի յարաբերութիւններ առաջ կըդան, որոնք կըստեղծեն ընտրողական իրաւունքի բեփորմի գաղափարը: Հասարակական պրոցեսը կատարում էր մերենաբար, անհատը զրան մասնակցում էր առանց հասարակական նպատակների հետամտելու: Սակայն մանր քանակական փոփոխութիւնները, որոշ աստիճանի համանելով առաջ են բերում նոր քաղաքական ձգտումներ: Տարերային գործունէութեանը փոխարինում է գիտակցական գործունէութիւնը՝ հասարակական տեսակետից: Ինչ որ մէկի յայտնած՝ բէփորմի գաղափարը դառնում է յետագայ զարգացման ամենաուժեղ շարժիչը և զեկավարում է գոյութիւն ունեցող հաստատութիւնների դէմ սկսուած կախւը: Նա նպատառում է ներկայ հասարակական խմբակի գիտակցաբար վերաբերունքին դէպի իր քաղաքական շահերը, որոնք արդէն գոյութիւն ունեն, բայց գեռ չեն գիտակցուած: Նա—զաղափարը—կազմակերպում է հասարակական գօրք, այսինքն «կուսակցութիւն», որը ներկայ հասարակական խմբակը գուրս է հանելու հսացած ընտրողական իրաւունքի դէմ: Առաջ է զալիս ագիտացիա, որը նպատակ է դնում տարածել գաղափարը և համախմբել շահագրգուածներին: Գաղափարը ամեն գործոնից օգտւում է.—նա դիմում է զառակարգային եսականութեանը, շահագործում է բարոյական ընազդները, օգնութեան է կանչում արդարութեան զգացմունքը և տրամարանութիւնը:

Զարգացման ամբողջ պրոցեսը մենք կարող ենք ներկացնել հետեւել կերպով:

1) Հասարակութեան մէջ, գոյութիւն ունեցող կազմի հովանուտակ, առաջ են գալիս տարերապէս ու մերենաբար հասարակական կենցաղի նոր նիւթական պայմաններ: Մարդիկ մասնակցում

են զարգացման պրոցեսսին առանց մտածելու թէ ի՞նչ հետեւանքներ կունենան առաջացող փոփոխութիւնները:

2) Զարգացման որոշ աստիճանի վրայ հասարակութեան մէջ հանդէս եկած նոր մասնաւոր շահերը՝ բարօրութեան ձգտելիս՝ արգելքի են հանդիպում գոյութիւն ունեցող իրաւական յարաբերութիւնների ռեժիմի կողմից: Առաջանում է զգացմունքների անգիտական անտագոնիզմ, որը յետագայ պրոցեսում վերջի վերջոյ նոր գաղափար է առաջ բերում, որով վերջանում է հասարակութեան դիալեկտիկական զարգացման որոշ շրջանը: Այդ գաղափարը «երկրորդային», ուրիշից բղիքով երևոյթն է, այսինքն նա երևան է զալիս արդէն այն ժամանակ, երբ առաջացած են լինում նոր իրային յարաբերութիւնները: Այդ աեսակէտից կեանքը իր տարերային զարգացմանը ներկայացնում է առաջնային, ստեղծագործ գործոնը, այն ինչ գաղափարը արտայայտում է միմիայն կեանքի՝ արդէն գոյութիւն ունեցող ձգտումները: Գաղափարը չէ՝ հասարակական շարժում առաջ բերողը — նա միմիայն կազմակերպում է համապատասխան տարբերը, որոնք գոյութիւն ունին դեռ նրա երևան գալուց առաջ:

3) Գաղափարի երևան գալովը հասարակական զարգացման տարերային ընթացքը տեղի է տալիս գիտակցական գործունէութեանը: Հասարակութեան համապատասխան խմբակը սկսում է գիտակցել, թէ իսկապէս ի՞նչում են կայանում իր բարօրութեան համար անհամեշտ պայմանները: Զարգացման այդ շրջանում գաղափարը դանում է պատմութեան ամենակարևոր գործոնը: — ընազդների և ատելութեան, շահերի ու պահանջների տարբերային ձայններին նա տալիս է որոշակի և գիտակցական ձև:

Հիմա մենք անցնենք միջնազարեան եւրոպայի պատմութեան մէջ քանի կողմերի վերլուծութեանը:

Քաղաքներն սկսում են եւրոպայում առաջ գալ XVIII դարում, իրանց երևան գալովը ազգարարելով արդիւնագործական ոյժերի բոլորովին նոր կազմ: Նրանք նպաստում են արհեստային աշխատանքի անջատմանը երկրագործականից, առաջ են բերում մշակութեան եղանակների մասնագիտացումն ու կատարելագործութիւնը, վերջապէս աւելացնում են աշխատանքի արդիւնաէտութիւնը: Քաղաքների զարգացումը առաջ է ընթանում դանդաղ, բայց առանց կանգ առնելու: «Պատմութիւնը, ինչպէս և ինքը

բնութիւնը թուիչքներ չէ ճանաչում, մինչև որ նրա ընթացքը արգելի չէ հանդիպում, — ասում է Մատուրերը Քաղաքային հիմնարկութիւնների պատմութեան յառաջաբանում: — Բնութեան մէջ ամեն ինչ զարգանում է ինքնարերաբար իր սաղմից: Քաղաքները առաջ էին գալիս նոյն այդ շարլոնով, այսինքն ինքնուրոյն կերպով և տարերապէս»:

Այդ սաղմը հողագործական համայնքն էր, որը վելիկօսուականից զանազանում է իր մի քանի առանձնայատկութիւններով, թէև ընդհանրապէս նոյն բանն էր: Դաշտերը անհատական գործածութեան տակ էին գտնուում, բայց հողագործի իրաւունքները սահմանափակ էին մշակելի հողի վերաբերմամբ: Նա չէր կարող իր հողը ծախել, առանց հարեանների համաձայնութեան կամ ինքնիշխան կերպով նրան մշակել, որովհետեւ համայնքը հնձից յետոյ քոլոր վարելահողերը գարձնում էր արօտատեղիներ անասունների համար և պահանջում էր, որ բոլորը միաժամանակ վարեն և միաժամանակ հնձեն հացը: (Մի քանի տեղ սովորութիւն կար հողը պարբերաբար բաժանել, կամ մի քանիսների ունեցածը կրծատել և ուրիշներին տալ): Արօտատեղիները, մարգագետինները և անտառները համայնքի ձեռքին էին գտնում: Մինչև անզամ բերքերը ծախելու իրաւունքը սահմանափակուած էր: Դեռ յետագայ շրջանում ևս, երբ արդէն լայն շուկայ առաջ եկաւ, համայնքի անդամներին թոյլ չէր տրւում առանց համայնականների համաձայնութեան արտահանել ածուխ, փայտ, խոտ, յարդ, ձուկ և այլն: Արդիւնաբերողը պէտք է գիւղում վաճառքի հանէր իր արտադրութիւնները, օրինակ՝ գութան, իւղ, թոկ, կճուճներ, և միայն այն ժամանակ կըհամարձակուէր նա գուրս տանել իր ապրանքները համայնքի սահմաններից, երբ տեղացի սպառող չինէր: Բայց այդ դէպքում մի որ և է հարեան կարող էր գնողի ետևից համենել և, վերադարձնելով նրա վճարած փողը՝ պահանջել, որ առարկան իրան տայ: Այդպիսի տնտեսական կազմը, որ ենթադրում է ընդհանուրի իրաւունքը հողի և նոյնիսկ առանձին անզամի աշխատանքի վրայ՝ պէտք է ծնունդ տար մի այնպիսի կազմակերպութեան, որը որոշէր հողից, մարգագետիններից և անտառներից օգտուելու կարգը, նշանակեր անասուններին արօտ տանելու և հացը ժողովը ժամանակը, գիւղական հովիւներ վարձէր և այլն: Գիւղական ժողովը վարում էր այդ գործերը, ընտրելով երբեմն իր միջց մշտական գիւղական լիազօրներ:

Հէնց այդպիսի սաղմից առաջ էին գալիս քաղաքները: Նախկին կոռալաշտական մեծ քաղաքները դանում էին եպիսկոպոսների մայրաքաղաք կամ քանքեր շինելու տեղեր և փոքր առ փոքր

փոխուում էին քաղաքների: Քաղաքները առաջանում էին նոյնպէս զօրքի մշտական կայանների կամ դրանց իշխանական առարտկների մօտերքը: Նմանապէս և այն գիւղերը, որ գտնուում էին բնական հաղորդակցութեան ճանապարհների վրայ՝ ժամանակով քաղաքային պարիսպ էին ստանում: Այդ զարգացումը առաջ է զնում, իսկ համայնական հիմնարկութիւնները դրա համար սկզբնակէտ են ծառայում: Համայնքն ստեղծեց գիւղական ժողով, որը վարում էր բնակիչների գործերը, կատարում էր սոտիկանական, վարչական և մասամբ դատաստանական պարտականութիւններ: Քանի կազմակերպում է քաղաքը՝ քաղաքային կարիքները թւով աւելանում են և դրա համեմատութեամբ էլ բոյութիւն ունեցող մարմինների ֆունկցիանները աւելի բազմազան են դառնում ու բազմաթիւ: Այդ բոլորի տեսչութիւնը անհրաժեշտարար մնում է այն կազմակերպութեանը, որին դատաւ քաղաքը իր ծագման ժամանակ, այսինքն ժառանգութիւն ստացաւ համայնքից: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել:

Սակայն մի ժամանակ համայնքի իրաւագօր քաղաքացի կարող էր լինել միայն նաև ովհ էնց պապերի ժամանակից պատկանելիս է եղել համայնքին, այն ինչ եկտորը համարուել է օտարական, այսինքն այնպիսի մարդ, որ չէ մտնում համայնքի կազմի մէջ:

Օտար տեղ ընկնելով այդպիսի եկտորը, պահանջ էր զգում իրաւական հովանաւորութեան և դառնում էր այն երկրագործի ձեռնասունը (ԿԼԻՇԻՏԵ), որի հողի վրայ նա ապաստան էր գտել: Այս բոլորը կատարուում էին այն ժամանակները, երբ հող առնելու ու ծախելու սովորութիւնը դեռ չկար, եկտորները սակաւաթիւ էին և աղքատ, քաղաքային հաստատութիւնները հաշուի չէին առել նրանց ընդունելութիւնը: Արդէն շատ ուշ, երբ եկտորները ազգաբնակութեան մէջ սկսում են աչքի ընկնող տոկոս կազմել՝ իրերի դրութիւնը փոխում է և անձնական կախումը վերանում է: Բայց այդ ժամանակ ևս օտարականները քաղաքացիութիւն չէին ստանում: Այդ օրը գալիս է միայն այն ժամանակ, երբ եկտորները կազմում են հարուստ դաս և ձեռք բերում իրանց սոցիալական շահի գիւղակցութիւնը, այսինքն, երբ նրանք սակաւաթիւ և աղղեցութիւնից զուրկ խմբակից, որպիսին ներկայացնում էին սկզբում՝ դառնում են քաղաքում գերիշխող արդիւնագործական ոյժերի ներկայացուցիչներ:

Քանի բազմանում են դրանց եկող այդ տարբերը, սկզբնական երկրագործական համայնքի կողքին, որ ժամանակով դառնում է մունիցիպալիտետ, առաջ են գալիս ուրիշ կազմակերպու-

թիւններ (ցելսերը), սկզբում մասնաւոր բնաւորութեամբ: Զարգացման այդ աստիճանի վրայ անտագոնիզմ՝ է առաջ գալիս հիներկրագործ տոհմերի, որ այժմ պատրիկներ են դարձած և որոնց պատկանում է քաղաքային գործերի վարչութիւնը—և միւս կողմից պլեբէյների միջև, այսինքն արհեստաւորների, որ իրանց սկիզբն առնում են եկլորդներից: Տոհմերի քաղաքական արտօնութիւնները բոլորովին նորմալ երևոյթ էին կազմում, քանի որ քաղաքի գոյութեան ազբիւրը գեռ երկրագործութիւնն էր և երկրագործական տոհմային տարրը ազգաբնակութեան մէջ թուով գերակշռում էր: Բայց երբ հարստութեան ու արդիւնաբերութեան կենդրոնը անցաւ ցեխերին՝ իրերի գորութիւնը բոլորովին փոխուեց: Այն ինչ որ մի ժամանակ բնական էր համարւում՝ այժմ կերպարանափխուում է և դառնում՝ ամենամեծ անարդարութիւնը: Նախկին երկրագործներից առաջացած քաղաքացիները ազատ էին քաղաքային տուրքերից ու պարտականութիւններից, պլեբէյների վրայ վերևոց էին նայում, ծախսում էին քաղաքային փողերը, ծախսում էին դատաստանական վճիռները: «Դերջ չկայ հարկերին—գանգատում էին ցեխերը, —յայտնի չէ, թէ ուր է կորչում գանձարանի ոսկին, քանի որ քաղաքային պարտքերը փոխանակ պակասելով՝ դեռ աճում էլ են»:

Անտագոնիզմն աւելանում է: Խուլ, ծածկուած ատելութիւնը սկսում է տարածուել պլեբէյների մէջ: Վերջապէս կուտակուած վիրաւորանքները ծնունդ են տալիս գիտակցաբար արտայայտուած քաղաքական ձգութմներին: Դրանց բնաւորութիւնը մենք կարող ենք սկզբից նախատեսել: Խաչակրաց արշաւանքների ժամանակ պատրիկների և պլեբէյների մէջ ծագած կոփաները հոգնոսեան քաղաքներում ամենօրեայ երևոյթ են կազմում: Մի որ և է տոհմ վիրաւորեց իր արարով «խուժանի» միջից մէկին, դատարանը գործը անարդար վճռեց, ահա զրան իրը պատասխան՝ վիրաւորուած ցեխերը պաշարում են քաղաքային խորհրդատները (բատուշա): Այն արհեստաւորը, որի նախնիքները գոհ էին նրանով, որ քաղաքում ապաստան էին գտել, պահանջում է քաղաքային կանոնադրութեան վերափոխութիւնը աւելի գեմոկրատական ոգով:

Իտալական քաղաքների պատմութիւնը իրանց Գուելֆներով ու Գիելֆներով, Մեդիչի և այլն զինաստիհաններով, ինչպէս և գերմանական ու ֆլանգրիական քաղաքների պատմութիւնը—ամեն տեղ ներկայացնում են նոյն կոփւը:

Ամեն տեղ գործել են միենոյն հասարակական ոյժերը, թէ պէտք ամեն քաղաքում ուրիշ հետևանք է ստացուել, նայած կոռուպտմբակների փոխադարձ յարաբերութեանը, մասնակցողների գի-

տակցութեանը և կոռուի այլ պատմական պայմաններին: Մի քանի քաղաքներից պատրիկների տոհմերը գաղթեցին ուրիշ երկիր կամ բոլորովին ձուլուեցին պլեբէյների հետ: Ուրիշ քաղաքներում պատրիկների դասը իշխանութիւնն իր ձեռքին պահեց, մաս հանելով պլեբէյներին զանազան չափով և ի միջի այլոց ներմուծելով երկու խորհուրդ (պալատ). վերին՝ պատրիկներից կազմուած, և ներքին՝ ցեխերից կազմուած երրեմն տոհմերը գառնում են առանձին, մի վերին աստիճանի ինքնօրինակ ցեխ՝ բաղկացած հարուստներից, տանտէրերից և այլն, որը միւս ցեխերի նման իր ներկայացուցիչներն ունի քաղաքային փարչական հաստատութիւնների մէջ: Այդ տարբեր հետևանքների վերլուծութիւնը շատ հետաքրքիր է: Հետազօտելով այդ հարցը՝ մենք համոզւում ենք, որ ամեն տեղ միենոյն քաղաքաբարները առաջանում են միենոյն իրողութիւններից, այսինքն նիւթական պայմաններից, բայց որ խնդրի այս կամ այն կերպ լուծումը կախուած է բազմաթիւ գործների ներգործութեան ամբողջութիւնից:

\* \*

Արհեստի և առևտրի զարգացումը ազդեց ոչ միայն այն բանի վրայ, թէ ում պէտք է պատկանի քաղաքային գործերի տեսչութիւնը, այլ և կատարեալ յեղաշրջումն առաջ բերեց քաղաքային կեանքի ամբողջ սօցիալական մինուլորտի մէջ, ապացուցանելով, որ իրաւական և այլ հաստատութիւնները միայն սօցիալական վերնաւեկնեն, որը փոփոխում է նիւթական գործօնների, այսինքն արդիւնագործական ոյժերի յեղաշրջուելուց:

Մենք արգէն ասացինք թէ ինչումն էր կայանում համայնքի սովորութեան իրաւունքը (օբյակու որած) առարկաներին տիրելու կամ ծախելու գործում: Ազատ առևտրի սկզբունքները, որոնք երեան են գալիս քաղաքային պարիսպների ներսը՝ բոլորովին օտար էին նրան: բայց քանի զարգանում է առևտուն ու արդիւնաբերութիւնը, կամաց կամաց արմատական յեղաշրջում է տեղի ու նենում հասարակական կարգի իրաւունքների և սովորութիւնների մէջ: Քաղաքը, որ մի ժամանակ գերմանական մարմին էր, որը միայն իրանից ծնուածներին էր անդամ ճանաչում՝ դառնում է պատմարմին և ամեն մէկը, ով իր ազգանունը գրում էր քաղաքային ինքնավարութեան հիմնարկութեան մէջ, դառնում էր քաղաքի անդամ: Մեր այժմեան իրաւական հիմնարկութիւնները և իրաւագիտական, նոյն իոկ մի քանի բարոյագիտական և գեղագիտական հայեացքները երեան են եկել միջնադարեան քաղաք-

Ներում՝ այնտեղ առաջ եկող արդիւնագործական ոյժերի աղդեցութեան տակ: «Պէտք է մենք—իրաւացի կերպով ասում է Մառը—քաղաքների վրայ նայենք իրու կեանքի ներկայ կազմի կարապեաների վրայ»:

Մի ժամանակ աղատ առետրի մասին խօսք անգամ չը կար: Ոչ գերմանական համայնքը, ոչ բարոնի դղեալը ծանօթ էին զրանետ և ընդհանրապէս չէին հասկանում, թէ թնչ բան է անհատական աղատութիւնը: Ամենմէկը պէտք է կախումն ունենար մի ինչ որ հեռաւոր մէկից, եթէ չէրցանկանում բոլորովին վիճել նրան իր դէմ: Քաղաքներում առաջացող աճուրդները մի ինքնօրինակ անօթ են (թշուա) ներկայացնում, որի մէջ փոքր առ փոքր կազմում են աղատ անհատական գործունէութեան հասկայողութիւնները: Ծախողն ու գնողը պէտք է լիակատար աղատութիւն վայելեն իրանց գործունէութեան մէջ, գոնէ ապրանքների վերաբերմամբ: Քաղաքների աճելու համեմատ հետզհետէ աւելի ու աւելի բաղմաթիւ-խմբակներ քաղաքային աշխատանքի և առետրի աղդեցութեան տակ ձեռք են բերում տեղափոխութիւնների ու իրանց բուլը անելիքների համար նոյն աղատութիւնը և տարածում են իրանց պահանջները կեանքի այլ խաւերի վրայ: Միաժամանակ երեան է գալիս մի այնպիսի ստացուածք, որ արդիւնք է անձնական գործունէութեան, և նրանք, որոնք սեփական խելքով են հարստութիւն դիզել, իրանց ստացուածքի հետ արդէն այնպէս չեն վարում, ինչպէս համայնքում, որի մէջ հողը, միակ ստացուածքը, անցնում է սերունդներին: համաձայն նախնիքների սովորութեան և համայնական տիրապետութեան սկզբունքի: Վաճառական դասը աշխատում է ֆէօդալական իշխանութիւնից կտակներ կազմելու իրաւունք ձեռք բերել, որը ժամանակով դառնում է բոլոր քաղաքացիների սեփականութիւնը: Նոյն վաճառականները, որ գլխաւորապէս աղատ մարդիկ էին, ենթակայ են պետական դատարանների տեսչութեանը: Այդ արտօնութիւնը յետոյ տարածուեց ամբողջ քաղաքի վրայ աճուրդների և տօնավաճառների ժամանակ, մինչև որ, վերջապէս, պետական դատարանները դարձան քաղաքում մշտական հիմնարկութիւն: Սկզբում քաղաքը բաղկացած էր մի քանի միմեանցից անկախ մարմիններից, որոնցից ամեն-մէկը իր սեփական տեսչութիւնն ունէր: Համայնքի աղատ անդամները գտնուում էին «զեմսկի» ու ժողովրդական իրաւասութեան ներքոյ, արհեստաւորները ենթակայ էին ֆէօդալական ամրոցի դատավարութեանը, պաշտօնավարները և ամրոցային և պաշտօնավարական՝ իսկ բոլորը միասին համայնական դատավարութեանը: Պետական դատարանները, որոնցով օգտւում էին մի-

միայն առեւրատականները տօնավաճառների ժամանակ, կամաց կամաց փոխարինում են այդ բոլոր տեսչութիւններին և սկիզբ զնում յետագայ փոփոխութիւնների: Ամբոցային սատիկանութեան ոչընչացումը և քաղաքում կարգ պահպաններու անհրաժեշտութիւնը ստեղծում են նոր կարգադրութիւնների մի ժողովածու, որը, քանի առաջ է գնում, զարգանում, աւելի ու աւելի մեծանում է և տանում է դէպի պրոցեդուրայի, դատաստանական կատարելագործութիւնների: Օրգալիանները անհետանում են և երեան են գալիս նոր հաստատութիւններ—մեր դատաստանական սովորութիւնների կարապեանները:

Աղատութիւնը, որ սկիզբն է առնում աճուրդների աղդեցութեան տակ, շատ խոչընդուների է համայնքի սովորութեան իրաւունքը, ընդհանուր կախումը, կայքերի տոհմային սեփականութիւն լինելը—այս բոլորը դանդաղացնում են պրոգրեսիւ զարգացման ընթացքը: Բայց քանի առեւուրը մեծանում է և «վաճառականութեան իրաւունքը» դառնում է բոլոր քաղաքացիների իրաւունք (որ նշանակում է, թէ բոլոր քաղաքացիք սկըսում են՝ մասնակցել աղատ առեւուրին)՝ հին ժամանակների սովորութիւնները անյայտանում են: Հանդէս է գալիս լիակատար աղատութիւն՝ հողը ծախելու և աւելի ես, ուրեմն, սեփական աշխատանքի արգասիքները ծախելու համար. ծնունդ է առնում անհատական աղատութիւնը, որ բոլորովին տարբերում է ֆէօդալական և տոհմային արխատոկրատիայի արտօնութիւնից, աղջիկները ծնողներից յետոյ ստանում են ժառանգութեան մի մասը. ամուսինների մէջ առաջ է գալիս գոյքի ընդհանուր սեփականութիւն փոխանակ նախնական անջատման: Նոր հասկացողութիւնների և սովորութիւնների այդ միջնորդարը կազմում է զանդաղ կերպով: Քաղաքները, այդ նոր հաստատութիւններն ստեղծելիս, առաջնորդում են էմպիկիքական փորձով և հետեւում են առօրեայ զործական կեանքի ցուցմունքներին: Նրանք ձեակերպում են իրանց այդ իրաւական պահանջները և դրանց հաստատութիւնը ստանում են միապետներից և իշխաններից:

Եյդ հրովարտականները Xll և XIII գարերում արգէն քաղաքին կեանքի նեցուկն են դառնում համայնական կանոնադրութիւնների դէմ կուռելու: Դրանք ընդունում են աղատ վաճառումը, կտակներ կազմելու իրաւունքը և ամուսնական միութիւնների աղատութիւնը: Զարգացումը մշտական ընդհարումն է առաջ բերում հին սովորութեան և «ժամանակի ոգու» միջն:

Մարդիկ սովորում են զանազաններ—սկզբում բաւական անշընորնք ու կոպիտ կերպով, սակայն հետզհետէ աւելի մեծ հմտու-

թեամբ — շարժական և անշարժ գոյքի հասկացողութիւնները, սեփական աշխատանքը և ժառանգութիւնը. երեան է զալիս խնամակալութիւնը անչափահասների համար և կանանց ժառանգութիւն ստանալու իրաւունքը: Կատարելագործում՝ է անհատի ունոր ձեր ընտանեկան, իրային և ժառանգական իրաւունքը: Հոռվմէական օրինագրեթերի գիւտը (ու նրա ուսումնասիրութիւնը) չափազանց նպաստում՝ է նոր հասկացողութիւնների ունոր ձգտումների վերջնական յաղթանակին: Հէնց այդ հանգամանքն է, որ հասկանալի է դարձնում, թէ ինչո՞ւ հոռվմէական իրաւունքը այնպէս արագ տարածուեց. — նա արդէն կը ուսումնասիրութիւնը արտայատել էր այն պահանջները, որ ծնունդ էին առնում եւրոպայի հասարակական կենքում, տարերային փորձառութեան ազգեցութեան տակ: Հոռվմի օրինագրեթը (Կօդեքսը) իր դարաւոր իմաստութեան հեղինակութեամբ ոչնչացնում՝ էր այն բոլոր արգելուները, որ կարող էր դնել հին համայնական և նատուրալ ռեժիմը քաղաքում՝ ազատ առևտրի ազգեցութեան տակ ծնունդ առած իրաւական հասկացողութիւնների դէմ:

Եւ միայն նոր իրաւաբանական հայեացըները չեն, որ ծնունդ են առնում քաղաքներում: Այնտեղ երեան են զալիս նաև նոր բարոյագիտական հասկացողութիւններ:

Առևտուրը այնպիսի սովորութիւններ է ստեղծում, որոնք չեն կարող տեղ ունենալ համայնական ոգու և վայրենիներին յատուկ համերաշխութեան մթնոլորտում: Վայրենիների հասարակական կազմը դատապարտում էր վաշխառութիւնը: Այն ինչ քաղաքային կեանքում տոկոսով փող տալու շնորհքը մշտական, ընդհանուր և կատարեալ «բարոյական» սովորութիւն է դառնում. այնպէս որ յետագայ մեշշանական փիլիսոփաները գտնում են, որ այդ երևոյթը բացարձակ (աբօլիւտ) արդարութեան հետ կատարելապէս համաձայն է: Ընդհակառակը, թալանը, վայրենութեան շըրջանում հարստութեան ու փառքի հասնելու այդ միակ աղբիւրը, առաջին անգամ դատապարտութեան է հանդիպում: Քաղաքացիները զրան հակադրում են այն գոյքը, որ ձեռք է բերուած սեփական աշխատանքով ու ինսայողութեամբ: Այդպիսով, քաղաքացին պարիսպների ներսը, որպէս իրային յարաբերութիւնների արտացոլում՝ փոքր առ փոքր կազմուեց մեշշանական էթիկայի ամբողջ կօդեքսը՝ անհատական ուտելիտարիզմը, անտեսական ինքնոգնութեան ու ինսայողութեան, նմանապէս և փոխազարձ մրցման պատգամները:

Զուարձութիւններն ու էսթետիքական զգացմունքներն անգամ բացառութիւն չեն կազմում: Տեղը չէ այստեղ մանրամասն

խօսելու այդ խնդրի մասին: Կընկատենք միայն, որ քաղաքացիները սկսում են զգուանք տածել դէպի ասպետների զինուորական սիրագործութիւնները, տուրնիրները, ձիարշաները: Ընդհակառակը զրքի ու մտքի մարդիկը, ուսումնականները իրաւաբանները, որոնք լեզուն ուրիշ ապրանքների նման ծախում էին շուկայում՝ սկսում են ընդհանուր յարգանք վայելել համաքաղաքացիների կողմից: Մտքի և վարուելու ձեռքի ճկունութիւնը հոգեկան ամենաբարձր յատկութիւններ են համարւում: Որ վերածնութեան շըջանը սկսուեց իտալական քաղաքներում՝ այդ հանգամանքը պատահականութիւն չէ, այլ ուղղակի պատմական անհրաժեշտութիւն:

Մեր այս վերլուծութեան մէջ մենք ցոյց տւինք, թէ ինչպէս քաղաքների այսինքն արդիւնագործական ոյժերի որոշ համախմբութեան՝ զարգացումը ազդեց իրաւունքի, բարոյագիտութեան և էսթետիքայի (գեղագիտութեան) վրայ, թէ ինչպէս նիւթական պայմանների որոշ գասաւորութեան ազգեցութեան տակ նոր անտարգումները և քաղաքական ձգտումներ են առաջ գալիս: Մենք կարող էինք իրողութիւններն աւելի մանրամասն առաջ բներել, բայց այդ մանրամասնութիւնները նոր գծեր չէին աւելացնել մեր տուած պատկերներին: Այնուամենայնիւ, մեր եղրակացութիւնները լրացնելու համար մենք ցոյց կը տանք, թէ ինչ փոփոխութիւններ առաջացրին ամբողջ ֆէօդալական աշխարհում քաղաքների երեան գալը և զարգացումը:

III

Վերցնելով քաղաքը որպէս մի անկախ ամբողջութիւն, մենք մի կողմն էինք թողնում նրա առնչութիւնը դէպի ֆէօդալիզմը: Մենք զբաղուած էինք այն հասարակական պրօցեսներով, որոնք կատարւում էին քաղաքային պարիսպների ներսը, այն անտապոնիզմներով, որ ծագում էին այնտեղ, այն գաղափարներով, որ ծնունդ էին առնում առևտուրի ազգեցութեան տակ:

Բայց քաղաքները միայն սկզբնական կէտերն էին այն մեծ ցանցի, որ կամաց-կամաց ծածկում էր ամբողջ երկիրը: Արևմտեան հոռվմէական կայսրութեան անկումից յետոյ կուլտուրայի հետքերն անհետացան նոյն իսկ այն տեղերում, որոնք քաղաքակաթութեան բաւական բարձր մակերեսոյթի վրայ էին գտնուում: Սկսուեց մի նոր շըջան. — բաժանման ու մարդկային ձգտումների այլասեռում (растасовка), տեղական ինքնավարութեան, մշաական

իոռովութիւնների ու ներքին երկպառակութիւնների, կամայականութեան ու տոհմային զրէժմութեան շրջանը: Ազգաբնակութիւնը ցրուած էր անթիւ ձորերի ու անտառների խորքերում, նատուրալ տնտեսութիւնը թագաւորում էր: Միայն իշխանների ու իշխանաւորների ամրոցներում էին պատահում հեռու տեղերից բերուած մթերքներ:

Այդպիսի հանգամանքներում երևան են գալիս առևտրական յարաբերութեան առաջին առաջմերը:

Սկզբում, երբ դեռ նոր էին ծագում քաղաքները ու դեռ հաղորդակցութեան ճանապարհներ չկային, երբ դեռ գոյութիւն չունին տօնավաճառները, որ հեռաւուր երկրներից վաճառականներ գրաւեն, — քաղաքացիները այնքան էլ չեին մտածում, որ բաւականաշափ ուժեղ կենդրունական իշխանութիւն չկայ երկրում կարգ պահպանելու համար: Բայց ժամանակի ընթացքում իրերի դրութիւնը փոխվում է: Պետական կենդրունացման անբաւարարարութիւնը սկսում է ետ պահել արդիւնագործական ոյժերի պրոգրեսսի ընթացքը, որոնք բուն էին զբեր բաղաքում և կախուած էին, ի միջի այլոց, հայրենի քաղաքից, բուրգից գուրս առևտուր անելու հնարաւորութիւնից: Ճանապարհներին ոչ միայն աւազակները, այլ և նոյնիսկ իշխանները աւազակութեամբ են պարապում, որովհետեւ երկրում այնպիսի իշխանութիւն չկար, որ դիմադրէր նրանց: Ասպետ դասակարգը իր արտօնութիւնն էր համարում այդ զբաղմունքը: Կոփեներն ու խոռովութիւնները ամենօրեայ երեսոյթ են դանում: — Իսկ երբ կոփե, պատերազմ չէր լինում՝ զօրքերը բաժնուում էին առանձին առազակային խմբերի և կողոպտում էին թէ օտարներին և թէ իւրայիններին:

Այսպէս թէ այնպէս, քաղաքների ու ֆէօդալիզմի մէջ ընդհարումը անխուսափելի էր:

Սկզբում երկու կողմերն էլ բաժան-բաժան, ցրուած ոյժերով են կուռմ, և այլ կերպ չէր կարող լինել, քանի որ հարեւան տեղերի մէջ փոխադարձ կապ չկար: Ամեն մի քաղաք աշխատում է մեղմացնել փէօդալական կազմի բացասական կողմերը. սկզբում նրանք գործում են մեծ մասամբ առանձին-առանձին, սակայն յետագայում միանում են միևս բուրգերի հետ և դաշնակցութիւններ կազմում: Բայց այս բոլորը արդէն յետագայ դարաշընանին է վերաբերում: Իսկ առաջ քաղաքները հովանաւորող ձեռքերի կարոք էին զգում: Միապետները նրանց «անդորրաթղթեր» են տալիս, այսինքն իրանց անձնական ինամակալութեան տակ են առնում՝ որոշ ժամանակամիջոցով տօնավաճառ գնացող առևտրականներին: Արդէն Կարոնոս Մեծը այդպիսի Markt Frieden է շնորհում

Ստրագրուրգի վաճառականներին, տալով նրանց ամբողջ պետութեան մէջ ազատ առևտրի և սեփական գորք պահելու իրաւունք: Այդ օրինակին հետեւում են իշխաններն ու եպիսկոպոսները. — Նըրանք «իսաղաղականներ» են տալիս սկզբում միայն առանձին վաճառականական տօնմերին, յետոյ այդ ինամակալութիւնը տարածում է ամբողջ վաճառականութեան և ապա, վերջապէս, և քաղաքի բոլոր բնակիչների վրայ: Բայց արտօնութիւնները փոքր նշանակութիւն ունին այնտեղ, որտեղ պետական իշխանութիւնը այնպիսի միջոցներ չունի իր ձեռքին. որ կարողանայ ճնազանդութիւն ներջնչել իր հրովարտականներով: Եկեղեցին աւելի ազդեցիկ է հանդիսանում այդ տեսակէտից: Քաղաքները զնում են «Ա. Պետրոսի խաղաղականը», սինօդները պաշտպանում են վաճառականներին տարուայ որոշ օրերին և այլն: Լինում են այնպիսի ասպետներ, նոյնիսկ իշխաններ, որոնք զօրք են պահում և վարձով ուղեկցում են վաճառականների կարաւաններին:

Այդ բոլոր հաստատութիւնները, որ ծնունդ են առնում քաղաքների զարգացման հետ միասին, ապացոյց են, որ ապահովութիւնը և կարգապահութիւնը անհրաժեշտ են նրանց բարօրութեան համար: Մինչդեռ փէօդալիզմի ներկայացուցիչները չեն կարողանում թողնել խոռովութիւններն ու երկպառակութիւնները: «Խաղաղականների» հովանու տակ բուրգերը ոյժի և հարստութեան կենդրոն են դանում: Նրանք զօրքեր են վարձում և մինչև անգամ սկսում են պատերազմել հարևան բարոնների հետ:

Փոքր առ փոքր, արդիւնագործական ոյժերի աճման հետ միասին, որոնք կենդրունացմած են քաղաքներում, ծնունդ են առնում այնտեղ նոր խորհուրդներ և նոր ձգտութեամբ: Տարեբային զարգացման ազդեցութեան տակ, քաղաքները սկսում են երազել ամրոցային զօրքերի ոչնչացման և թագաւորների հեղինակութիւնը բարձրացնելու մասին, մտածում են ուժեղ կենդրունական իշխանութիւն ստեղծելու մասին, որը երկրի ամբողջ տարածութեան վրայ կատարէր ոստիկանական և դատաստանական ֆունկցիաները: Բուրգերն ու քաղաքները ոչ միայն փափագում են այդպիսի կարգեր ուսենալու, այլ և նիւթական պայմաններ են ստեղծում, զըրանց՝ կեանքում մարմնացնելու համար: Նրանց համակրութիւնը հասարակութեան այն տարերի կողմն է, որոնք ձգտում են սահմանադրել բարոններին, յենուելով հէնց փէօդալական կազմի իրաւական հասկացողութիւնների վրայ, — ուրիշ խօսքով այդ համակրութիւնը կայսրների, թագաւորների կրոնական ազգապէս կայսրը համարում է բոլոր փէօդալական լաւութիւնների միավետուն Բայց այդ սկզբունքը, որը բովունք արդիւնական միավետուն է շնորհում:

թեան քաղաքական կազմից, գործնական կեանքում մեռած տառ էր մուռմ: Միապետի հեղինակութիւնը, որ անհետացել էր VIII—XIV դարերի կենցաղի նիւթական պայմանների խառնաշփոթութեան պատճառով, քանի գնում աւելի ու աւելի շատ կողմանակիցներ է գրաւում, որքան զարգանում նն քաղաքային կեանքը առ ևտուրը և հաղորդակցութեան ճանապարհները:

Քաղաքները՝ կենդրոնական իշխանութեան իրաւունքների համար կուողների յառաջապահն են կազմում—որպէս կենդրոններ երկիրը միացնող արդիւնագործական ոյժերի, և որպէս աղբիր նիւթական ու բարոյական միջոցների, որոնք անհրաժեշտ են ֆէօդալական սահմանադրամակութիւնները զսպելու համար: Թագաւորների հետ նրանք գաղտնի խորհրդակցութիւններ են ունենում վիճակային (յաթլեհան) իշխանների դէմ, հրապարակ են հանում իրաւաբաններ, որոնք իրանց փաստաբանութեամբ ոչնչացնում են իրաւական խոչընդուները, կենդրոնական հեղինակութեան ներկայացուցիչներին նիւթական սիջոցներ են մատակարարում, ստեղծում են նոր զինուորական ոյժ—հետևեկ զօրքը, որը՝ մանաւանդ վառողի գիւտից յետոյ՝ նպաստում է ասպետական կազմի զինուորական նշանակութեան անկմանը:

Նախընթաց մասում մենք գլխաւորապէս Գերմանիայից էինք օրինակներ բերում, իսկ հիմա բացառապէս կանգ էինք առնում Ֆրանսիայի հասարակական զարգացման վրայ, որովհետև այնտեղ այդ ձգտութերը ամենամաքուր ձևով են երևան գալիս: Այժմեան պետական կենդրոնացումը և պետութեան փունկցիաները—զրանք միայն վերջին օղակիներն են ներկայացնում փոփոխութիւնների այն մեծ շղթայի, որոնք սկսուեցին արհեստի ու երկրագործութեան անջատումից, արդիւնագործութեան՝ քաղաքների մէջ կենդրունանալուց և առանձնացած արհեստների կենդրոնների մէջ առետուր սկսուելուց: Կարոլոս Մեծի «խաղաղականը» դարձաւ ամբողջ Երկրի բնակիչների ապահովագրութիւնը, դարձաւ պետական իրաւունքի թէօրետիկների ասած «իրաւական», «ոստիկանական» պետութիւնը (Rechtsstaat և Polizeistaat):

#### IV.

Քաղաքների միջն կանոնաւոր ու եռուն առետուր չէ կառող գոյութիւն ունենալ, քանի չկան համապատասխան հաղորդակցութեան ճանապարհներ, չկայ հասարակական ապահովութիւն, քանի որ բարոնները սահմանադրում չեն: Այդպիսի առետուրը,

մի անգամ երևան գալով, առաջ է բերում իր բոլոր հետեանքները և փոքր առ փոքր խորակում է այն քաղաքական և իրաւաբանական ուժիմը, որ ծաղկել էր քաղաքների սկզբնական պատմութեան ըլջանում: Ապահովութիւնը և մարդկանց ու ապրանքների բազմապատկուած շարժողութեանը աւելանում է մի նոր գործօն և, այն է ազգաբնակութեան խտութիւնը: Այն ինչ մի ժամանակ ծառայում էր յառաջադիմութեանը, ժամանակի ընթացքում սկսում է ետ պահել յետագայ զարգացումը: Մենք չենք զբաղուի այդ յեղաշրջման մանրամասն վերլուծութեամբ: Կանգ կառնենք միայն նրա վերջին մոմենտի վրայ, և այն էլ միայն մի երկրում, XVIII-արդ դարի Ֆրանսիայում, երբ ամեն տեղ, քաղաքներում ու գիւղերում, արդիւնագործական ոյժերի նոր դասաւորութեան ազդեցում տակ նոր գաղափարներ են երևան գալիս, որոնք՝ խորապէս թեան տակ նոր գաղափարներին, համապատասխան հակասելով հին ռեժիմի հաստատութիւններին, համապատասխան հասարակական կեանքի նոր տարրերի պահանջներին:

Արհեստաւորական կազմակերպութեան հիմունքները շատ պարզ էին: Գոյութիւն ունէին մի շարք աստիճաններ, որոնք պայմանաւորում էին այն իրողութեամբ, որ հարկաւոր էր ձեռք բերել հմտութիւն և արհեստի գաղտնիքը, այն՝ ինչ որ միանգամից չէր ձեռք բերում: Աշակերտը գառնում էր վարպետի օգնական, այնուհետև ստանում էր վարպետի կոչում, գառնում էր ցեխի (համքար) անդամ և իրաւունք էր ստանում անկախ պատուէրներ ընդունելու: Ցեխը, որ սկզբում փոխադարձ օգնութեան կազմակերպութիւն էր և մասամբ պլերէյների ուղամիկ զօրախումբ՝ ժամանակով, երբ հրապարակ եկան նոր խնդիրներ՝ դարձաւ շուկային հսկող և իր անպարակ եկան նոր խնդիրներ՝ մըցումից պաշտպանող մի կազմակերպութիւն: Միջին դարերի սկզբներում շուկան սահմանափակուած էր բաղաքային պարսպով: Հաղորդակցութեան ճանապարհների պակասութեան պատճառով ուրիշ քաղաքներից ապրանքներ չէին բերում: Ցեխերը իրանց ցանցով ամբողջապէս ծածկել էին հայրենի բուրգի փոքրեկ շուկան և այն փունկցիաներն էին կատարում, որոնց մասին այժմ երազում են սինդիկատները և կարտեները ազգային և մինչև անգամ միջազգային շուկայի վերաբերմամբ: Նըրանք ձգտում էին իրանց բոլոր անդամներին հաւասար շանսեր տալ ապրանքերը ծախելու գործում: Արհեստաւորը կարող էր միայն սահմանափակ թուով աշակերտների աշխատանքից օգտուել, պէտք է պատրաստէր միայն որոշ տեսակի ապրանքներ և այդ ապրանքները ծախելը նշանակուած գնով և այլն:

Ցեխային (համքարական) կազմակերպութիւնը իր անդամների շահերին համապատասխանող ձև ընդունելուց յետոյ, ամուր

կպչում է այդ ձերն, չնայած որ կեանքը շարունակ առաջ է գը-  
նում և, ի միջի այլոց, ազգային շուկայ է ստեղծում: Միևնույն ժա-  
մանակ քանի աճում է ազգաբնակութիւնը՝ վարպետի կոչումը ըս-  
կը արտօնութիւն դառնալ, մի քանի քաղաքներում նոյնիսկ  
սահմանափական, ու ցեխերը ձգտումն են ցոյց տալիս  
նակարերն այն է, որ ցեխային մարմինը բոլորին անընդունակ  
է հանդիսանում արդիւնագործութիւնը աւելի լայն հիմունքների  
վրայ դնելու, այնպիսի հիմունքների՝ որ համապատասխան լինէին  
ազգային շուկայի պահանջներին: Քանի որ շուկան սահմանափա-  
կում էր բուրգի մի քանի հազար ընակիչներով, արդիւնագործ-  
ութեան չափերը պէտք է անշան լինէին: Երբ սկսում է ազգա-  
յին առևտուրը՝ հնարաւորութիւն է առաջ գալիս աւելի մեծ թւ-  
ով բանտրներ կենդրոնացնել մէկ տեղ, աշխատանքի բաժանումն  
ներմուծել, և այն: Բայց համբարական կանոնագրութիւնը, որը մեծ  
խնամքով բաժանում էր մի արհեստ միւսից, ու սահմանափակում  
արհեստաւորի օգնականների թիւը և արտադրած ապրանքների  
քանակութիւնը՝ այն տեղն է հասցնում գործը, որ, օրինակ, Անդլիա-  
յում մանուֆակտուրանները ծաղկում են ոչ թէ պատմական քաղաք-  
ներում, այլ գիւղերում, համբարական արդիւնաբերութեան կեն-  
դրոնները փոած վայրեր են (Թիվուայ մեծեպէկ) դառնում, իսկ  
անշան բնակավայրեր՝ Մանչեստերներ և Բերմինգհամներ:

Ցեխերը, որ XII—XV դարերում յառաջադիմական կազմա-  
կերպութիւններ էին, այնուհետև դառնում են յառաջադիմութեան  
կապանքը (Տօրմազ) և խայտառակ շահագործութեան միջոց: Դրանց  
յատուկ կանոնադրութիւնը արգելում է աշխատանքի բաժանումն  
երմուծել և բացի դրանից մենաշնորհական գներ է դնում ապրանք-  
ների վրայ և այդ այն միջոցին, երբ հասարակութեան համար արդէն  
հարաւորութեան կար աւելի էժան գնով ապրանքներ ստանալու.  
վերջապէս, թոյլ չէ տալիս միջոցներ չունեցող՝ սակայն եռանդում  
մարդկանց, կարիերա, ասպարեզ ստեղծելու իրանց համար: Որ-  
քան առևտուրը հետզհետէ աւելի լայն շուկաներ է կազմում և  
դրա հետ միասին խրախուսում է աշխատանքի բաժանման մեծ  
չափերը, — այնքան ցեխերը, բանի գնում՝ հնացած կազմակերպու-  
թիւն են դառնում:

Նոր արդիւնագործական ոյժերի պաշտպանները պահանջում-  
են ոչնչացնել ցեխային սահմանափակումները: Էժան ապրանքներ  
գնելու հնարաւորութիւնից ոգերուած նրանք ճիգ են թափում  
իրականացնել ազատ մրցութեան գաղափարը: Բանտրները, ու-  
րոնք տեղ չունեն համբարութեան մէջ՝ տըտնջում են այդ կազմա-

կերպութեան փակ լինելու դէմ: Հասարակութեան մէջ հնչրւմ է՝  
«laissez faire, laissez passer!» կոչը: Ներկայում ամենասոսկալի  
ֆիւլիստերն անգամ պարտք է համարում քննադատական վերաբեր-  
մունք ցոյց տալ դէպի գործը և մի քանի կծու խօսքեր ուղղել  
այդ պահանջի հասցէին, որի երեան գալը պատմութեան մէջ՝  
հետևանք էր արդիւնագործական նոր ոյժերի, որոնք չափազանց  
գորեղ էին, որպէսզի կարողանային պարփակուել ցեխային անձուկ  
կազմակերպութեան մէջ: Այդ գաղափարը ժամանակով մարդու  
ազատութեան կարապետն էր, ազատութիւն՝ սահմանափակ նիւ-  
թական պայմաններից և մտաւոր նեղ հորիզոններից, որոնք ծը-  
նունդ էին առել փոքրիկ միջնադարեան բուրգում և համապա-  
տասխանում էին այն ժամանակուայ կեանքին:

\*

Հասարակական ապահովագրութիւնը և ազգաբնակութեան  
խոսցումը, նատեսութեան անկումն ու փոխանակու-  
թեան ծաւալումը նպաստեցին նոյն դժողովութեան երեան գալուն  
գիւղացիների մէջ ևս Մենք կանք չենք առնիլ ճորտատիրութեան  
ծագման (րենէզից) վրայ. Նկատենք միայն, որ նա երբեմն սարկու-  
թեան արդիւնք է, երբեմն հետևանք է յօժարակամ պայմանագրի,  
որը, սակայն, ժամանակով բոլորովին այլ բնաւորութիւն ստացաւ:  
Բայց ինչ սկզբնաւորութիւն էլ նա ունենայ՝ պատմութեան որոշ  
շրջանում նա մի կատարելապէս բացիօնալ հաստատութիւն էր,  
այսինքն՝ հէնց իրանք, այդ հաստատութեան (ճորտատիրութեան)  
հետ կապուած մարդիկը, մի բարոյական, օրինական, անհրաժեշտ  
և օգտակար բան էին համարում նրան: Կարոլինդների ժամանակ  
ազատ գիւղացիները ահազին բազմութեամբ կաթոլիկ եկեղեցու  
ազատ գիւղացիները ահազին բազմութեամբ կաթոլիկ հետևանք  
ձեռքն են յանձնուում, որը, այդպիսով, իր անուան հեղինակութեամբ  
պաշտպանում է նրանց երկարակութիւնների հետևանքներից:  
Գիւղացին իր հպատակութիւնը համարում էր որպէս փոխադարձ  
ծառայութիւն. — Փէօդալը պաշտպանում էր նրան կողոպուտներից  
և վայրենի գաղաններից, ոստիկանական փունկցիաներ էր կա-  
տարում, իսկ հողագործը զրա փոխարէն տուրք էր վճարում, տա-  
լիս էր իր աշխատանքի արդիւնքներից և մշակում էր տիրոջ  
վարելանողը: Ճորտատիրական կազմի բազմաթիւ պարտականու-  
թիւններից ամեն մէկը շատ խելամուտ ու հասկանալի բան էր ամեն  
գիւղացու համար: Նա ըստ մեծի մասին մի որ և է իրային յարա-  
բերութեան արտայայտութիւն էր, որը առաջանում էր հասկա-  
ցողութիւնների, պահանջների ու սովորութիւնների ընդհանուր ազ-

դեղութեան տակ և երկու կողմերի համաձայնութեամբ։ Եւ միայն շնորհիւ այն հանգամանքի, որ ճորտափիրութեան պաշտպանները ծանօթ չէին անցեալի հետ, իսկ լիբերալիզմի ներկայացուցիչները խեղաթիւրում էին փաստերը—պատմաբանները ճորտափիրութեան սկզբնաւորութիւնը սկսեցին փնտռել միմիայն բոնութեան մէջ։ Անկասկած, ուժեղի իրաւունքը մեծ դեր է խաղացել ֆէօդալիկան կազմի և ճորտափիրութեան հաստատման գործում։ Բայց պէտք է յիշել, որ 1X և X դարերում, այսինքն այն ժամանակ, երբ ճորտափիրական յարաբերութիւնները սկսեցին երևան գալ, ասպետը իր սպառագինութեամբ դեռ չէր տարբերում հասարակ գիւղացուց, և մի կողմը՝ կարող էր ապստամբութեամբ պատասխանել միւս կողմի սանձարձակութեան դէմ։ Կախեալ գրութիւնը, չխօսելով, իհարկէ, գերիների և «օտար-երկրացիների» մասին, ուրոնք ցեխային կազմից դուրս էին գտնւում,—ազատ մարդկանց միջն առաջ էր գալիս փոխադարձ համաձայնութեամբ։

Տամանակները, երբ գերմանները կիսանստակեաց կեանք էին վարում յեխը բաղկանում էր զինուրներից, որոնք գնում էին պատերազմ, երկրագործներից, որոնք մնում էին տառը. Յաջորդ տարին պատերազմ գնում էին երկրագործները, իսկ զինուրները մշակում էին հողը: Ֆէօդալիզմի ժամանակները, այդ բնական ու անհրաժեշտ աշխատանքի բաժանումը պահպանում է հիմուելով արիստոկրատիական սկզբունքի վրա. Գիւղացին էլ այդ բանը շատ արդարացի է համարում:

Առ հասարակ, ամեն մի յօժարակամ դաշնագրութիւնը և ա-  
մեն մի ժամանակաւոր կախումն նատուրալ անտեսութեան շրջանում  
դառնում է մշտական, իրային (անշեշտական) կախումն. Ու երբ,  
վերջերը, ասպետներն սկսեցին անպատկառ շահագործութեան հն-  
թարկել իրանց հպատակներին, իսկ վերջիններս այդ ձնչումներին  
պատասխանեցին ապատամբութիւններով—նոյնիսկ այդ ժամանակը  
ձնշուածների գլխում հազիւ էր ծագում ճորտատիրութիւնն իսպառ  
վերացնելու միտքը: Եղած քողոր պահանջները միծ մասամբ «աւելի  
արդար և խղճով» փարուելու պահանջներ էին: Միայն այն ժա-  
մանակ, երբ հասարակական ապահովութիւնն աւելացաւ զօրացող  
պետական իշխանութեան պաշտպանութեան տակ, երբ ոչնչացան  
դպեակային զօրախմբերը, որոնք, այնուամենայնիւ, գեռ գիւղա-  
ցիութեան պաշտպանների գեր էին կատարում, երբ պետութիւնը  
դատարաններ հիմնեց երկրի ամբողջ տարածութեան վրայ,—այն  
ժամանակ միայն հասաւ ճորտատէրերի իշխանութեան անկման  
շրջանը:

Աղնուականութեան արտօնութիւնները այնուհետև գիւղացու

համար դառնում են մի ինչ որ անհասկանալի, անմիտ բան։ Ծնոր-  
հիւ կրօնի և տրադիցիայի ազդեցութեան՝ այդ արտօնութիւնները  
առ ժամանակ դեռ անձեռնմխելի են համարում, բայց ոչ օգտա-  
կար։ Տէրերի իրաւունքները, որոնք մի ժամանակ իրաւացի, հաս-  
կանալի էին՝ այժմ միայն վնաս են բերում, և այդ բանը գիւղացի-  
ների մէջ խօսակցութիւնների և գանգատների տեղիք է տալիս։  
Ամենօրեայ «վիրաւորանքներն» ու «ճնշումները»—այս բառերը  
մենք չակերտների մէջ ենք դնում, որպէսզի ցոյց տանք նրանց  
համեմատական, պատմական ընաւորութիւնը՝ ընդհանուր դժգոհ-  
ութիւն են առաջ բերում։ Ատելութիւնը, որ սկզբում խուլ ու տա-  
րերային էր, խորտակում է այն հեղինակութիւնը, որ ունէր ճորտա-  
տիրութիւնը գիւղացիների աշխում։ Ժամանակի ընթացքում այդ  
ատելութիւնը քանի գնում՝ տարածում ու սաստկանում է։ Բանը  
հասնում է խոռվայրով իրարանցման, սոսկալի ու վայրենի իրա-  
րանցման։ Վերջապէս «ըննադատական միտքը» օգնութեան է հաս-  
նում։ — ընազդների տարերային և անդիտակցական յորձանքին նա  
պարզուոց արտայայտութիւն է տալիս, դիտակցուած ճնշումները  
ձևակերպելով նոր գաղափար է կազմում, որ պահանջում է՝ անձի  
աղատութիւն, անկապտելի իրաւունք սեփական աշխատանքով  
նոր բերուած արդասիքների վրայ, ոչնչացումն իշխանական արտօ-  
նութիւնների։

\*  
\* \*

Փոխանակութեան պըոգրեսում իր զարգացման որոշ շրջանում  
ստեղծեց քաղաքները և ծնունդ տուեց նրանց քաղաքական ինքնա-  
վարութեանը։ Սակայն, քանի գնում՝ միենոյն գործօնը իր յետա-  
գայ ընթացքում կործանում է իր սեփական ձեռակերտը և մին-  
չև անզամ՝ ոչնչացնում է գաւառների քաղաքական ինքնուրոյնու-  
թիւնը։

Նատուրալ տնտեսութեան շրջանում ամեն գիւղ, ամեն մի անկիւն տեղական պահանջներին բաւարարութիւն տալիս էր սեփական արտադրութիւններով;—Երկրի առանձին մասերը տնտեսագիւն բոլորովին անկախ են մէկ մէկուց, զրա համեմատ էլ ամեն գաւառ կառավարուում է իր սովորութեան իրաւունքով, ուրիշների դէմ իրան ապահովուում է մաքսերով ու տուքերով, կըսի ուրիշ չափեր է գործ ածում և այլն: Քանի դեռ առևտուրը թոյլ ու աննշան էր՝ այդպիսի զանազանակերպութիւնը նշանակութիւն չունէր բնակիչների համար, մանաւանդ այն խմբակների համար, որոնք հատուրալ տնտեսութեան սկզբունքները պաշտպանում էին: Բայց

այդ պատմական ժառանգութիւնը իր յետագայ զարգացման ընթացքում սկսում է բոլորովին ուրիշ ազդեցութիւն ունենալ—յետպահնել նրա պրոգրեսիւ ընթացքը։ Ապրանքների առևտրական շրջանառութիւնների քանակը աւելանում է, հասարակութեան՝ յետըզնետէ աւելի բազմացող խմբերի բարեկեցութիւնը քանի գնում սկսում է աւելի ու աւելի սերտ կախումն ունենալ արտահանութեան յարմարութիւններից։ Սակայն հասարակական պայմանների զանազանակերպութիւնը ետ է պահում անհատական հաշիւների ու ձգտու ների զարգացումը։ Մասնաւոր շահերը արդպիսի խոչընդուի հանդիպելով՝ մինչև այստեղ են տանում, որ ձեւակերպում են որ զաղափար—երկրի վարչական և իրաւական միութեան զաղափարը—եւ այդ զաղափարը, որպէս շահերի տարերային ճընշման արտայայտութիւն, այն խմբակների մէջ է երեան զալիս, որոնց բարեկեցութեանը ամենից շատ խանգարում է ֆրանսիական գաւառների ինքնուրոյնութիւնը։ Այդպիսի խմբակ ներկայանում է վաճառականական դասը։ Նա ամենից շատ է գործ ունենում երկրի զանազան մասերի բնակիչների հետ։ Դրա շնորհիւ նա քիչքիչ ազատում է տեղական նախապաշարումներից, և միւսներից աւելի հեշտ է կարողանում ըմբռնել մի անբաժան ազգութեան զաղափարը, որի սահմաններում բոլոր սովորութիւնները, հաստատութիւնները և, մասնաւոր, չափերն ու քաշերը միատեսակ լինէին։

\*\*

Մենք կանգ առանք պատմութեան միայն մի քանի կողմերի վրայ, որոնք վերլուծութեան համար աւելի յարմար էին։ Սակայն ամեն տեղ, հասարակական կեանքի բոլոր խաւերում, կեանքի նիւթական պայմանների մէջ առաջացած փոփոխութիւնների ազդեցութեան տակ—առաջացած՝ տարերաբար ու մեքենայօրէն, ժառնաւոր նպատակների վրայ գարձած գիտակցութեան շնորհիւ, երեան են զալիս որը պահանջներ։ Գոյութիւն ունեցող իրաւական ու քաղաքական կազմը չափազանց նեղ է նրանց համար—այն մըտքով՝ որ բոլոր հաստատութիւնները—ցեխերն ու մենաշնորհները, ազնուական մէրերի զատափարական իրաւասութիւնը (յօրիսցիկու) և գաւառների ինքնավարութիւնը, կենցլորնական իշխանութեան կամայականութիւնը և տոհմական արխտոկրատիայի արտօնութիւնը—արգելուք են հանդիսանում այն խմբակների նիւթական ու մտաւոր բարեկեցութեանը, որոնք այժմ որո ձգտումների պաշտպան են հանդիսանում։ Մի ժամանակ այդ հաստատութիւնները

մարմնացան կեանքում, լինելով իրանց ժամանակակիցների նիւթական պահանջների և ձգտումների հետևանքը, սակայն տասնեւութերորդ գարում նրանք յետագայ յառաջադիմական ընթացքի կապանքը դարձան, Առաջ եկած պահանջները իրանց զարգացման որոշ աստիճանի վրայ ծնունդ են տալիս նոր զաղափարների, որոնք աւելի ու աւելի մեծ չափով են տարածում։ Քանի աճում են համապատասխան նիւթական պայմանները։

Այդ պայմանները աճում են, և նոյնիսկ չեն կարող չաճել, որովհետև հասարակութեան ձոցում գոյութիւն ունի այն գործօնը, որը առևտրին ստիպում է աւելի ու աւելի լնդարձակուել, չնայած որ նրա ծնունդն է ինքը։ Այդ գործօնը աշխատանքի բաժանումն է։—Արհեստաւորի բազմազան աշխատանքը բաժանուեց մի շարք միմեանց լրացնող միօրինակ պարապմունքների, որի շնորհար միաժամանակ արգելուէտութիւնը աւելացաւ, ապրանքը էժանացաւ։ Հասաւ մեքենաներ հնարելու ժամանակը։

Պատմական պայմանները արգելուագործութեան այդ նոր եղանակներին մինչև անգամ առանձին տեղեր են յատկացնում, պատմական քաղաքներից գուրս, որոնց մէջ ստիպում է մնալ ցեխային կանոնագրութիւնը։ Ուրիշ մարդիկ, որոնք արհեստի տրագոցիաներից ազատ էին, առաջ տարան այդ գործը, ինչ կերպով և ինչու կարիք չկատ առնելու այդ ինդիքի վրայ։ Մանուփակտուրայից գուրս եկած ապրանքը իր համեմատաբար էժան գնի շնորհիւ ներս է թափանցում ամեն տեղ, յաղթում է արհեստաւորների մրցութեանը, արագացնում է առևտրական շրջանառութիւնների զարկերակը և, լայնացնելով շուկան՝ իրախոսում է նոր արդինագործական ոյժերի ու դրանց հետ միասին՝ հասարակական կենցաղի նոր նիւթական պայմանների յետագայ զարգացումը։ Մանուփակտուրան և նրանցից առաջացած գործարանը—զրանք այն անդադրում յեղաշրջման լծակներն են, որոնք ժամանակով կը միացնեն հետաւոր մայրցամաքները հետազրական ցանցերով, կը կատարելագործեն արտահանութեան միջոցները, կը ստեղծեն արդիւնարերութեան կենդրունացումն ազգային և նոյնիսկ միջազգային շուկայում, գիտութիւնը կը դարձնեն կեանքի գիտակցական գեկավարը։ Արդինագործական (և փոխանակութեան) նոր մեթոդները ծնունդ տուին մի նոր զասի (օօլովի), որ գոյութիւն չունէր մինչև այդ և տարբերում էր միջնադարեան բուրգերի մեջաններից։ Պարուժուագիտական համականերից գանգատաւոր է, թէ վաճառականը, որ ծախում է նոր արդինագործական եղանակների արգափեները, թէ կալուածատէրը, որ ցանկանում է իր կարիքներին էժան

բաւարարութիւն տալ և թէ պատ պարապմունքների ներկայացուցիչը, որ միացած է նրանց հետ ծագման կապերով ու զրկուած է քաղաքական իրաւունքներից: Այդ դասակարգը (СОСЛОВІЕ) միացնում է իր ձեռքում երկրի հարատութիւնն ու գիտութիւնը: Գիտակցելով իր ոյժն ու նշանակութիւնը, խրախուսուելով ամենօրեայշահերով, զգայուն՝ կեանքի նոր պահանջների համար (նիւթական բարեկեցութեան և բարոյական ու մտաւոր բաւարարութիւն ստանալու համար)—նա ասպարէզ է զալիս նոր գաղափարներով: Այդ գաղափարներն ու ձգտումները մարմնանալու էին ժամանակով մարդու իրաւունքների յայտարարութեան մէջ, աւելի ճիշտ՝ ոչ թէ ինչ որ վերացական մարդու, այլ մի որոշ պատմական շրջանի մարդու:

Բուրժուազիայի ձգտումների մէջ ձևակերպուած են միւս բոլոր դասակարգերի (СОСЛОВІЕ) շահերը, բացից ելեւ իրից և արիստոկրատիայից: Գաղափարը երեան գալով այդպիսի ըէալիստական եղանակով և միմիայն արտայայտելով այն, ինչ որ արդէն հասունացել էր կեանքում մարմնանալու համար, տարածում է երկրի մի ծայրից միւսը, զարգացնում է հասարակութեան համապատասխան խմբակների դասակարգային գիտակցութիւնը, կազմակերպում է անագին սոցիալական գորք—երրորդ դասակարգը (СОСЛОВІЕ): Ճիշտ է, նրա ծոցում կան անտապոնիզմներ, բայց նրանք լուսում են, աչքի առաջ ունենալով ընդհանուր թշնամուն, և միայն երեան գալու են յաղթութիւնից յետոյ: Դիւլացիները, որոնց ձգտումները բաւարարութիւն էին ստացել, ամենքից առաջ են դադարում հասունացած խնդրի լուծման մէջ եռանդուն կերպով մասնակցելուց: Ակտում է պատմական դրամայի երկրորդ գործողութիւնը, սանկիւլուտների կոիւը բուրժուազիայի դէմ,—գործողութիւն՝ որ լի է ուժգին կրքերով և ինքնօրինակ բնաւորութիւններով: Սակայն այդ տեղ էլ, արմատում, գործում են սոցիալական անտապոնիզմները, կրքերն ու նոյնիսկ անհատական մանր հաշիւները գործ են ածւում իրեւ զէնք:

## V

Եւրոպայի զարգացման գործուները վերլուծութեան ենթարկելիս մենք իրեւ ելակէտ վերցրել էինք այն հասարակական կազմը, որ հոսովմէական կայսրութեան աւերակների վրայ կառուցեց բարբարոսների տռամական կազմակերպութիւնը: Գերմանացիների քրիստոնէութիւն ընդունելը մի առանձին ընդհանուր մթնոլորտ-

ստեղծեց, որի նշանակութեան մասին լոել անկարելի է: Այդ մթնոլորտի ամբողջ նշանակութիւնը երեան է զալիս այն ժամանակ, երբ փոխանակութիւնը տեղական երկոյթ լինելուց դառնում է միջազգային հաստատութիւն:

Հոռվմին տիրելը սկիզբն է դնում մի կողմից հարկատու հպատակութեան (և ճորտափառութեան), միւս կողմից—Փէօդալական կախման: Քանի բարբարոսները անցնում են նստակեաց կեանքին՝ նախկին ցեղային կապը և համերաշխութիւնը ոչնչանում է և կազմում է տեղական ինքնավարութիւնը—վասսալական յարաբերութիւնների ու հպատակութեան այդ աղբերը: Մեզ համար ներկայ գէպգում այդ նախնական կազմը, որից ժամանակով առաջ են գալու յետագայ հասարակական ձևերը, հետաքրքրեիր չէ: Մենք նրա գոյութեանը մատնանիշ արինք, որպէս սկզբնակէտի վրայ և յետոյ անցանք սոցիալական էվոլյուցիայի՝ միմեանց յաջորդող հանգոյցների վերլուծութեանը, որոնք ժամանակի ընթացքում առաջ են եկել պատմութեան մէջ: Այդպիսի յարաբերութիւնների մէջ, լինքնավարական մասերի բաժանուող հպատակ երկում, երեան են գալիս քաղաքները, նոր արդիւնագործական ոյժերի՝ արհեստի ու փոխանակութեան կենտրոնները: Իշխանական դղեակները, եպիսկոպոնների պալատները և վանքերը կազմում են այն հիմքը, որի շուրջն առաջանում է հասարակական կենցաղինիթական պայմանների նոր համախմբումն, որն ստեղծում է ժամանակով նոր ցանկութիւններ և դադարիաներ, նախապաշտումներ, ձգտումներ և, վերջապէս հաստատութիւններ: Աւելի ուշ՝ քաղաքները դառնում են փոխանակութեան կենտրոններ—բուրգերից առևտուրը տարածում է աւելի ու աւելի հեռու և նրանց միացնում է հաղորդակցութեան մշտական ճանապարհներով: Ու նորից առաջ է զալիս արդիւնագործական (ոյժերի դրանց թւում և հարստութեան ու բնակչութեան) նոր դասաւորութիւն, կազմում են նոր հաստատութիւններ. և այդ բոլորը հետեւնք են կենցաղինիթական պայմանների մանր, բայց դարաւոր փոփոխութիւնների: Երեան են զալիս նոր անտապոնիզմներ, որոնք փոքր առ փոքր լուծումն են ստանում՝ յարմարեցնելով քաղաքական և իրաւական կազմը այն պահանջների հետ, որ ծնունդ են առել կեանքի նոր պայմանների ազդեցութեան տակ: Առաջ է զալիս պետութիւնը, որ յենում է արդիւնաբերութեան պահանջած կանոնների (բեղամենտացիա), ազնուականութեան արտօնութիւնների ու ճորտափական յարաբերութիւնների վրայ, և որի ինչ լինելը ամփոփում է կուգովիկոս XIV-րդի հետեւալ խօսքերի մէջ: «'Etat c'est moi». (գոնէ այսպէս էր ֆրանսիայում. ուրիշ երկրներում զարգացումը առաջ-

Էր ընթանում այլ ճանապարհով, պատմական տարրերը այնտեղ նոյնն էին, բայց նրանց փոխադարձ յարաբերութիւնները տարրերում էին):

Սակայն ապրանքների փոխանակութիւնը, ընդարձակուելով, նպաստում է արդիւնագործութեան նոր մեթօդների երևան գալուն և միացնում է հաղորդակցութեան ճանապարհներով և տնտեսական փոխադարձ կախումով աւելի ու աւելի հեռաւոր տեղեր: Ազդում է նոյնպէս ազգաբնակութեան խտութիւնը: Այդ գործնների ազդեցութեան տակ նոր աններդաշնակութիւն է առաջ գալիս յառաջադիմող կեանքի պահանջների և հին կարգերի իրաւական կազմի միջև: Առաջ է գալիս մեշտական կազմը: Բայց դրա ծոցում ևս արդիւնագործական ոյժերի յետագայ դրդացումը առաջ է ընթանում տարերաբար և մեքենայօրէն հասարակութեան բոլոր անդամների մասնաւոր շահերի ճնշման ներքոյ: Թէ մեշտական կազմի պաշտպանները և թէ նրանց հակառակորդները համերաշխ կերպով աշխատում են յօգուտ նոր արդիւնագործական ոյժերի: XIX—րդ դարի սովորական բարեկայից մէկը, պրօֆ. Գումարլովիչը, իր մի շարպութեան մէջ աշխատում է ցոյց տալ, որ կրոպական բանուրը, հետամուտ լինելով էժան ապրանք գնելու՝ իջեցնում է իր վարձքի չափը և ստիլում գործարանատէրերին շահագործութեան նոր ձևեր ներմուծելու: Էժան գնելու այդ ցանկութիւնը, որի մասին այդպէս եղուիտարար խօսում է Գումարլովիչը, կազմում է այն պառակալը, որ արդիւնագործութեան մեթօդների մէջ փոփոխութիւններ է մտցնում (արդիւնագործութեան եղանակների ինչ տեսակ լինելը երևում է ոչ միայն արդիւնագործութեան տեխնիկայից, այլև գործարանների երկրի մէջ դասաւորուելուց—մի քանիսը անյայտանում են, իսկապէս նրանք, որոնք յայտնի ապրանքն աւելի թանկ են արտադրում, այն ինչ միւսները, յառաջադիմականները, տարածում են հասարակութեան մէջ): Մենք մէր առօրեայ կարիքներին բաւարարութիւն տալու համար ապրանքներ գնելով չենք էլ մտածում, որ օրի վրայ նպաստում ենք տարերաբար, բայց սիստեմատիքաբար, արդիւնագործական ոյժերի կենտրոնացման և արհեստի անկմանը, գործարանական բրիգադների առաջ գալուն և քաղաքային տարրերի ծաւալմանը, ամեն կարգի եռուն շրջանառութիւններին և այլն, մի խօսքով, նոր ձգտումների ծագման համար անհրաժեշտ նիւթական հիմքերի աճելուն, որպիսի ձգտումների նկատմամբ մեզանից այս կամ այն անձը անհաշտ հակառակորդ է հանդիսանալու: Մանր, տարերային, առօրեայ գործողութիւնները, որ մասնաւոր շահի սահմաններից գուրս չեն գալիս, իրանց հետեւանքներով երբեմն ոչնչացնում են մեր գիտակցուած գործը, գի-

տակցուած՝ հասարակական հարցերի նկատմամբ: Դրա մէջ է թագնուած այն անհրաժեշտութեան մօմենտը, ինչ անհրաժեշտութեամբ որ՝ հին սեմիմը փոխելու համար՝ պատմութեան մէջ երևան են գալիս նոր ձգտումները:

Այն փոփոխութիւնները, որ տեղի են ունեցել պատմութեան մեր հետազոտած շրջանի ընթացքում, ներկայացնում են մի պրոցեսսիւ շղթայ:

Ամենուրեք—երկրագործութեան հետ կապուած մշակող արդիւնագործութիւնից մինչև քաղաքներում առանձնացած արհեստը, բուրդի տեղական փոքրիկ ու իր մէջ սահմանափակուած շուկայից՝ մինչև ազգային շուկան, ճորտային աշխատանքից՝ մինչև ազատաշխատանքը, արտադրութեան արհեստային եղանակից՝ մինչև աշխատական փոքրիկ գործարանից՝ մինչև սեմիդիկատներն ու տրուտները և արդիւնագործութեան պայմանների վիթխարի կենտրոնացումը—բոլոր գէպքերում, փոփոխութիւնների այդ ամբողջ շարքի ընթացքում, մենք գործ ունենք աւելի ու աւելի կատարելագործուած արդիւնագործական ոյժերի հետ. ըստ որում՝ յետագայ օգակը առաջանում է նախլնթացից գիտակցութեան տարերային ճնշման ազգեցութեան տակ, գիտակցութեան՝ որ միայն անձնական նպատակների է հետամուտ լինում: Մարդու աշխատանքը քանի գնում՝ արտադրած մթերքների աւելի մեծ քանակութեամբ է վարձատրուում:

Այդ պրոցեսսը առաջ է գնում տարերաբար և մեքենայօրէն և նոյն իսկ չէ կարող այլ կերպ առաջ գնալ:

Անցած սերունդներից յետոյ մնացած բնական ոյժերն ու հարստութիւնը գտնուում են միմեանցից անկախ առանձին-առանձին անհատների տրամադրութեան տակ և միմիայն անհատական նախաձեռնութեան շնորհիւ կարող են արդիւնաւէտ եղանակով գործադրուել: Արդիւնագործութեան մեթօդների կատարելագործումը և առհասարակ կեանքի սիւթական պայմանների կազմուածքում եղած բոլոր փոփոխութիւնները երեան են գալիս հասարակութեան մի շարք անդամների գործունէութեան շնորհիւ, որոնք ցանկանում են, ի հարկէ, որքան կարելի է; մեծ օգուտ ստանալ: Հասարակութեան ծոցում առաջանում է, նոր նիւթական պայմանների սաղմը, որ ժամանակի ընթացքում աճում է, և նրա հետ երեան են գալիս նոր պահանջներ ու կարիքներ, նոր գաղափարներ ու հաստատութիւններ: Ծնորհիւ մասնաւոր սեփականութեան տնտեսական փոփոխութիւնները նոր կէտերից են զուրուական գալիս, երբ օրինակ վերցնենք այն փաստը, որ արհեստաւորը չէր-

մանուժակտուրաներ հիմնում և ոչ էլ ցեխային բուրգն է ժամանակակից ինդուստրիայի զարգացման կենտրոնը դառնում: Արդիւնագործական նոր ոյժերը ծագում են երկրի միայն մի քանի կէտերում, ընդգրկում են հասարակութեան միայն մի քանի խըմբակները և վերափոխում են նրանց կենցաղի իրային պայմանները, ջոկում են նրանց մնացած հասարակութիւնից, նրանց մէջ նոր պահանջներ են գոյացնում, իսկ յետագայում՝ նոր գաղափարներ և, վերջապէս, դրանց հակադրում են գոյութիւն ունեցող իրաւական ռեժիմին, որը յետ է պահում նրանց զարգացման ընթացքը: Նոր գասը (СОСЛ.) յաղթող է հանդիսանում, երբ իրային պայմանները համնում են համապատասխան ինտենսիվութեան, և իր գաղափարները մարմնացնում է հաստատութիւնների մէջ լիովին, կամ, երբեմն մասամբ՝ նայելով հանդամանքներին: Այդպիսով՝ սօցիալական էվոլյուցիան տեղի է ունենում այն անտագոնիզմների մասնակցութեամբ, որոնք օրգանապէս ու անգիտակցօրէն (հասարակական տեսակչութից) հասունանալու շրջանից յետոյ ընդունում են գիտակցուած հասարակական ձգտումների կերպարանք: Զարգացման խորբում միշտ հնարաւոր են պատմական կատակլիզմներն ու «թուիչքները», որոնցով վերջանում է նոր իրային պայմանների տարերապէս առաջանալու օրգանական շըրջանը, բայց հնարաւորութիւնը, պէտք է ասել, անհրաժեշտութեան՝ ընաւորութիւն չէ կրում իր մէջ: Կատակլիզմի փոխարէն կարող են տեղի ունենալ մասր, չնչին բեֆորմանք և փոխադարձ կրոմպըռմիսներ: Որպէս հետևանք մասնաւոր, տարերային, բայց օրգանական, առօրեայ գործունէութեան՝ հասարակութեան կեանքում երեան են գալիս նոր ինդիրներ: Սօցիալական կեանքը եր գիտակախական զարգացման ընթացքում անընդհատ առաջ է քաշում նոր ու նոր ինդիրներ և, —այլ խօսքով մենք նոյնն ենք առօրմ—կազմակերպում է սօցիալական բանակ և սօցիալական պայմաններ, որոնք անհրաժեշտ են առաջ քաշած ջնդրի լուծման համար:

Բայց պատմական պլրոցեսի այսպէս ըմբռնելը հեռու է ֆատալիզմից, որպէս այդ կարող է թուալ մակերեսոյթային քննադատին: Դրա մէջ տեղ չկայ պատմական պասսիւութեան համար կամ այնպիսի մի հայեացքի՝ թէ կարելի է ձեռքբեր ծալած նատել ծովի ափին և լաւ եղանակի սպասել Մարգը տարեբային կերպով հասարակական հարց ստեղծելով՝ նրան կարող է լուծել միայն գիտակցուած պատմական գործունէութեան միջոցով: Կարող է պատահել, որ, չնայելով նրա լուծման համար ամենանպաստաւոր պայմաններ կան՝ նա չկարողանայ իր կարիքներն այնպէս ձեւ-

կերպել, ինչպէս հարկն է, ուր մնաց խելացի ու եռանդուն կերպով գործելը: Մեքենայօրէն ընթացող զարգացումը միայն առաջ է քաշում ինսդիբը և պատրաստում է նրան լուծելու տարրերը: Հայցը նրանց լուծում է միայն զիտակցաբար գործող մարդը: Դաշտավայրի այդպիսի ծագումը շատ հաշտ կերպով կենացում է ամենալայն չափով կատարուող մտաւոր գաղափարային գործունէք ուժեան հետ:

Դարձեալ մէկ բան:

Գաղափարը առաջ է գալիս հասարակութեան մէջ իրբ հասարակական կենցաղի փոփոխուած նիւթական պայմանների արդիւնք: Նա պատմական զարգացման մէջ «երկրորդային» (ԵՏՈՐԿ-ԻՒԾԻ) երեսյթ է, հետևանք է: Իրային, նիւթական պայմանները որոնք երեւան են գալիս առանց հասարակական նպատակների հետամտող մտքի մասնակցութեան՝ պիտի առաջանան նախ քան նոր գաղափարների մէջ ձեսկերպութիւն ստանալը: «Նիւթը» գերիշխում է զիտակցութեան վրայ, ներկայացնում է «առաջնայիշ» սկզբնական գործօնը, աւելի լաւ ասած՝ նրանից է ծագում պատմական յեղաշըջումը: Հասկանալի է, որ ընդգծելով գաղափարի այդ «երկրորդային» բնաւորութիւնը, մենք ամենաեն մտադիր չենք նրա ազգեցութիւնը ժխտելու: Մենք միայն որոնում ենք նրա սկզբն ու ծագումը: Բնդիսակառակը, նրա նշանա՛ռ թիւնը պատմական պրոցեսում ահագին է: — տիրանալով հասարակութեան անդամների ուղեղին՝ նա մի բանակ է ստեղծում, որը հրապարակի վրայ դրուած իդէալաները մարմացնում է իրական (ըէալ) հաստատութիւնների մէջ: Պատմութեան վրայ մեր ունեցած հասկացողութիւնը ասում է միայն, որ գաղափարը չի ծնում մարդկանց ուղեղում, առանց արտաքին պայմաններից բեղմնաւորուելու, որ նա յայտնի ժամանակաշըջանի նիւթական պայմանների արդիւնք է, և որ նրա ներգործութիւնը սահմանափակում է այն հասարակական խմբակով, որի բարօրութիւնը կապուած է ժամանակակից նիւթական յարաբերութիւնների յետագայ զարգացման հետ: Այդ հասկացողութիւնը աշխատում է ապացուցել, որ գաղափարի երեսան գագը կապուած է որոշ ժամանակաշըջանի ու յայտնի տեղի հետ, որ հասարակական բանակի կազմը կամայական չէ, այլ յենուում է այն անձանց վրայ, որոնք իրանց առօրեայ շրջապատում գաղափարը իւրացնելու պայմաններ են գտնում, իսկ սեփական շահի մէջ գտնում են պատմական գործունէութեան դրդիչը:

Ըստունելով, որ ձևակերպուած ձգումը խոշոր պատմական սշանակութիւն ունի, մենք այնուամենայնիւ բացառում ենք այն բանը, թէ գաղափարը կախումն չունի տեղից և ժամանակից և

որ «հերոսը», «քննադատական անձնաւորութիւնները» կարող են կամայական ձև տալ սօցիալական օրգանիզմին: Այն, պատմութեան մէջ կան մեծ մարդիկ և ամբոխ, դեկավարներ ու ինիցիատորներ, հանճարներ, և տիմարներ: Նրանց առատութիւնը կամ պակասութիւնը արագացնում կամ դանդաղեցնում է պատմական խնդիրների ու նրանց լուծման ընթացքը, սակայն չէ ստեղծում նրանց, որովհետեւ կեանքի իրողութիւնների գաղափարային ձեակերպութեան ու նրանց կամայական ստեղծագործութեան միջն մեծ տարածութիւն կայ:

VI

Վերոյիշեալ եղբակացութիւնները վերաբերում են սիայն VIII-XVIII դարերի ժամանակաշրջանին և այն էլ միմիայն Արևմտեան եւրոպային: Մենք կարող էինք մեր վերլուծութիւնը տարածել ուրիշ ժամանակաշրջանների կամ ուրիշ երկրների վրայ, բայց որովհետեւ մեր հայեացքները առանց այն էլ բաւական պարզ են, մենք այդ մի կողմն ենք թողնում: Սակայն, պէտք է ասել, որ կայ և ուրիշ հանգամանք, որ մեզ ետ է պահում այդ փորձն անելուց, — այդ այն է՝ որ մենք բաւականաչափ ծանօթ չենք ուրիշ երկրներում գործող պատմական ոյժերի ասբողջութեան հետ: Վերև պարզած հասկացողութիւնը մի պատրաստի կաղապար չէ, որի մէջ ամեն բան կարելի է զետեղել միենոյն նախագծով: Մենք, շարունակ, մեր շարադրութեան մէջ մատնացոյց ենք արել դրանց, ասելով, որ միենոյն ոյժերը, նայած նրանց փոխադարձ յարաբերութեանն ու պատմական անցեալին՝ տարբեր լուծում են առաջ բերել և տարբեր հետեւանքի հասցըել: Այսոել բաւական է միայն յիշել միջնադարեան քաղաքների պատմութիւնը կամ համեմատել ֆրանսիայի և Գերմանիայի պատմութեան մի քանի մօմենտները:

Հետաքրքիր կըլինէր բացատրել այդ տեսակէտից և Հոռվմի պատմութիւնը: Սկզբում այդ քաղաքի ներքին կեանքը ներկայացնում էր միմիայն կոխու համայնական հողատէրերի ու եկորսների միջև, ինչպէս միջնադարեան բուրգերը: Սակայն այնտեղ զարդացման գրդիշներն ուրիշ էին. մշտական պատերազմները, այսինքն օրինականացքած աւագակութիւնը — որպէս հարստութեան աղբիւր, — կազմում են այնտեղ զարգացման գլխաւոր պատմական գործոնը: Ելակէտն էլ ուրիշ է: Եւրոպայի քարգացումն սկսում է նուաճման ակտից, որ ծնունդ է տալիս ֆէոդալական կազմին:

տեղի է ունենում ազգերը միացնող քրիստոնէական կրօնի ընդհանուր հիմքի վրայ: Հոռմի պատմութիւնը սկիզբն է առնում տոհնական մայիս ու ցեղական նախնիքների առանձնացնող կուլտից, որը չի կարողանում հաշտուել հարեանների կուլտի հետ:

Մշտական պատերազմների չնորհիւ հոռմէական ազատ գիւղացիներն աղքատանում են. այդ վիճակին են հասնում միմեանց դացիներն աղքատանում են. այդ վիճակին են համար բարեկան յետից և հարեան ցեղերի գեղացիները: Վանդուելով սեփական հողից՝ նրանք հաւաքրում են քաղաքում և կազմում պլեբէյների գասըր (COOL): Սկսում է գասակարգավիճն կուլտ, որի ընթացքում վաշատանում աշխատում են լայնացնել իրանց քաղաքական իրավունքին սաղմը, առանձնապէս սկսած այն ժամանակից, երբ latifundia-ների սաղմը, առանձնապէս ակսած այն ժամանակից, պատերազմներում բռնուած գերիներից կազմում է ստրուկների մշտական գասակարգը:

Ստրկական աշխատանքը առաջ է բերում յետագայ փոփութիւնները:

Ազատ քաղաքացին անպատճեւթիւն է համարում որևէ է աշխատանքով պարապելը — դա ստրուկ ամբոխի գործն է: Պլեբէյը, փոխանակ առաջուայ նման գէպի հողը ձգտելու, նայում է իր քաղաքական իրաւունքների վրայ, որպէս մի միջոցի՝ որպէս կարեւլի է վաստակ ունենալ, հարստանալ. և այդ ճանապարհով խլում է պատրիկներից այն արդիւնքների մի մասը, որը ստացւում է ստրուկներին շահագործելով:

Քաղաքական անբարոյականացրութիւն աւելանում է: Պատրիկները պատերազմների չնորհիւ տէր են դառնում ահագին հարստութիւնների: Երեան է գալիս մշտական զինուած ոյժ, որ ժողովում է այնպիսի տարրերից, որոնց անծանօթ է Հոռմի աւանդութիւնը: Հասնում է այն շրջանը, երբ պալատականները փորձում են Հոռմի հրամայողները զառնալ: Բանը հասնում է այնտեղ, որ կայսը ութիւն է յայտարարուում, անյայտանում է տոհնային արիստոկրատիան, պլեբէյները դասնում են քաղաքային հասարակ ամբոխ — Lumpenproletariat, որպէս կասէին, երկի, գերմանական թէօրետիկները: Այսուհետեւ փոփոխութիւնները տանում են մինչև այն որ Հոռվմում կամաց-կամաց՝ կազմում է նոր խմբակ — զինուած պրետորիանները, և կայսը նրանց ձեռքին միայն մի միուած պրետորիանները:

թշուառ աղքատութեան դուռն էր հասել ստրկական աշխատանքի ժամանակները՝ մեծ փերմաներից անցնում է կօլօնատային, այսինքն բաժան բաժան է լինում գիւղացիական մանր ազարակների, որոնց համար ջրամբարները, ճանապարհները և բարձր քարեալները միւս արգասիքները աւելորդ են:

Այդ էվոլիւցիայի յետազգայ օղակները նախընթացներից առաջանում են տարերային զարգացման միջոցով։ Իբրև հետեանք չնշին փոփոխութիւնների՝ առաջանում է նիւթական յարաբերութիւնների մի նոր կազմ, որը ստեղծում է նոր զգացմունքներ, հայեացքներ և հաստատութիւններ։ Երկրագործութիւնը, որ յենում էր բոլոր քաղաքացիների անմիջական աշխատանքի վրայ, հողերի անցնելը պատրիկների ձեռքը և գիւղացիների աղքատանալը, տուն ու տեղից զրկուած գաղթականների հոսանքը հարեան յաղթուած ցեղերից և պլերէյների կոփուը քաղաքական իրաւունքների համար, ստրկական լատիֆունդիաները, պլերէյների բարոյական անկումը, որ քաղաքական իրաւունքները վաստակի աղքիւը էին դարձրել, պատրիկների փոխադարձ մրցումը, զօրքի նշանակութեան քարձրել, պատրիկների անցնելը, հողի ուժասպառութիւնը և կայսրութիւն յայտարարելը, հողի ուժասպառութիւնը և կօլօնատային անցնելը, —ահա Հոռվմի պատմութեան յաջորդական շղանները։ Արեւմտեան Եւրոպայում փոխանակութեան զարգացում է ոչնչացնում կեանքի հին հիմունքները, Հոռվմում պատերազմը։

Բայց ես չեմ համարձակում պիստել, թէ Հռովմի այդ գործ  
գացումը ներկայացնում է որպէս հետզհետէ աւելի արդիւնաւէտ  
գացումը արդիւնագործական ոյժերի մի յաջորդական շարք։ Բա-  
ղարձող արդիւնագործական ոյժերի մի յաջորդական անցնելը  
ցառութիւն կազմում է յատիփունդիաների՝ կօլօնատային անցնելը  
—այսուղի յեղաշրջման այդպիսի բնաւորութիւն ունենալը անկաս-  
կած է։

VII

Մեր յօդուածում մենք զբաղւում էինք այն խնդրի վերլուծութեամբ, թէ սրտեղից են ժողովդի պատմական կեանքում նոր գաղափարներ առաջ գալիս, և այն էլ այնպիսի գաղափարներ, որոնք անհետ չեն կորել, այլ իրանցից յետոյ հետք են թողել պատմութեան էջերում: Այստեղ մենք պէտք է նկատենք, որ գոյութիւն ունեն և ուրիշ գաղափարներ, որոնք միայն ցնորամիտ երեակայութեան արդիւնք են, առանց իրական կեանքում արժանաներ ունենալու, կամ թէ չէ երեան են գալիս իրրե բիրտ

Նախագաղութիւն այս անտագոնիզմների և ինդիլների, որոնք գեռ սաղմային դրութեան մէջ են գտնուում և յայտնի ժամանակաշըրջանում՝ դատապարտուած են ամլութեան:

Եւ նրանց երեալը ամենսին պատահական չէ. սազայն ու յ վերլուծութիւնը ներկայ պայմանում մեզ համար աւելորդ է, ու բովինետև նրանք չեն ծառայում, որպէս պատմական ֆերմենտ (խմորութիւն), որ քայլայում է հին հիմքերը և նոր հաստատութիւն-ների համար տեղ հարթում: Մեզ համար կարեռ էր հետագօտել, թէ ի՞նչպէս են ծնունդ առնում այն գաղափարները, որոնք պատմական գործն են գառնում և, մի անգամ երևան գալով հասարակական կեանքում՝ չեն անյայտանում, այլ դառնում են հասարակութեան ամբողջ խմբակների սեփականութիւն ու նոյնիսկ պատմական կոռուփ լոգունք: Մենք աւելի ևս նեղացրինք առաջադրած ինդիրը, որովհետև զբաղուցինք բացառապէս այն գաղափարները, որոնք յաղթող հանդիսացան, այսինքն՝ մարմնացան իրական հաստատութիւնների մէջ:

Այդպիսի գաղափարների վերաբերմամբ, այսինքն այսպիսի  
գաղափարների, որոնք լիովին պատմական են, մեր ուսնեցած  
հասկառութեանը լանգուս է հետեւեալին.

1) Մասնաւոր գործունէութեանը յամուսն ազգեցութեան տակ փոքրապիոքը հասարակութեան մէջ առաջ են գալիս նոր նիւթական պայմաններ, նոր «արդինսագործական ոյժեր»։ Հասարակական տեսակետից վերցրած՝ նրանք տարբերաբար ու մերենայօրէն չեն զարգանում, այսինքն զարգացման ղեկավարը ոչ թէ հասարակական, այլ անձնական նպատակներն ու գիտակցութիւնն են։ Ամեն ինչ ամփոփում է այստեղ մասնաւոր շահերին բաւարարութիւն տալու մէջ։ Ոչ ոք չի մտածում թէ թուչ հետևանքներ կունենայ իր մասնաւոր գործունէութիւնը հասարակութեան համար։

2) Նոր սիւթական պայմանները զարգանալով օրգանագչաց էվոլյուցիայով, անշան քանակական փոխուսութիւնների միջոցով ստեղծում են ժամանակի ընթացքում ազգաբնակութեան համապատասխան խմբակների մէջ նոր կարեները, ըստ որում՝ վերջիններս դառնում են նոյն սիւթական պայմանների յետագայ զարգացման դորձոնք: Նոյն ասենք և այլ կերպ՝ համապատասխան խմբակի բարօրութիւնը կապուած է նրան ստեղծող նիւթական յարաբերութիւնների յետագայ զարգացման հետ:

3) Զարգացման որոշ աստիճանի վրայ անտագոնիզմ է առաջ գալիս զոյլութիւն ունեցող իրաւական յարաբերութիւնների և այն պահանջների միջև, որոնց ծագումը մենք հետազոտեցինք: Կախախնդրուածների մէջ երևան են գալիս նախանձի և տառելու-

թեան տարերաբար ուղղուած զգացմունքներ, կիսագիտակցական ձգտումներ և նոյնիսկ զրգուած կրքերի տարերային արտայայտութիւններ: Վերջապէս նոր պահանջները վերջնական գիտակցական ձևակերպութիւն են ստանուած նոր գաղափարների մէջ, որոնք տարածուելով՝ կազմակերպում են համապատասխան տարրերից հասարակական բանակ: Նշանակում է՝ որ գաղափարը հասարակական կեանքում երևան է գալիս որպէս երկրորդային, ուրիշից բղխող երևոյթ, նաև՝ իրողութիւնների արդիւնքն է ու նրանց արտացոլումը՝ մարդկային ուղեղում: Զարգացման այդ աստիճանի վրայ անտագոնիզմները նկատելի են դառնում լիովին. զարգացումը, որ մինչև այդ էվոլյուցիոնային ու օրգանական էր՝ բոլորովին այլ բնաւորութիւն է ընդունում, հասարակութեանը միշտ սպառնում են կատալիզմները:

4) Այդպիսով արտայայտուած գաղափարը ձևակերպում է այն խնդիրները, որին հասարակական կեանքը պատրաստել էր տարերաբար: Այդ գաղափարը միաժամանակ ցոյց է տալիս այն ճանապարհը, որով շահախնդրուած խմբակները ձգտում են լուծել առաջադրած խնդիրը, այսինքն՝ թէ որ հաստատութիւնները ամենից շատ կըհամապատասխանեն նոր պահանջներին: Իսկ հասարակական զարգացումը ոչ միայն ստեղծում է խնդիրը, այլ և կուտակում է նրա լուծման միջոցները: Այդ միջոցները մարմնացած են այն խմբակի մէջ, որը առաջանում է ժամանակակից իրային յարաբերութիւնների զարգացման հետ միասին: Գաղափարը անզիտակցական ձգտումներին տալիս է գիտակցական բնաւորութիւն, ցրուած ոյժերը միացնում, մի ամբողջութիւն է կազմում, ցոյց է տալիս նպատակները: Այդ շրջանում գիտակցութիւնը դառնում է հասարակական էվոլյուցիայի ամենակարեւոր գործօնը, և մարդիկ մտցնում են պատմութեան մէջ գիտակցական հոգերանական գործօնը:



«Ազգային գրադարան



NL0191714

